

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԸ

Հայկական Ցեղասպանութիւնը ճանչնալու Հերթը Ամերիկայինն է

Հայկական Ցեղասպանութեան 104-ամեակի նախօրեակին արձանագրուեցան երկու կարեւոր իրադարձութիւններ: Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն յարգելով իր խոստումը, ստորագրեց Ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանութեան յիշատակման օր հռչակելու մասին հրամանը: Այս ուղղութեամբ կարեւոր քայլ մը առաւ նաեւ Իտալիոյ Պատգամաւորներու պալատը՝ ընդունելով բանաձեւ մը, որ կոչ կ'ընէ երկրի կառավարութեան պաշտօնապէս ճանչնալու Հայոց ցեղասպանութիւնը եւ անոր տալ միջազգային հնչեղութիւն:

Ամերիկեան Գոնկրէտէն ներս շրջագայութեան մէջ դրուած է Հայկական ցեղասպանութեան նոր բանաձեւ մը, որու տակ արդէն իսկ ստորագրած են Ներկայացուցիչներու Տան աւելի քան 70 անդամներ: Այս բանաձեւը Գոնկրէտի օրակարգէն քննարկուելու պարագային, մեծ է հաւանականութիւնը որ ան արժանանայ մեծամասնութեան հաւանութեան:

Անցեալին Ցեղասպանութեան բանաձեւերը ներառուած են Գոնկրէտի օրակարգի վրայ, սակայն Սպիտակ Տան եւ Պետական քարտուղարութեան բանեցուցած ճնշումներու պատճառաւ, վերջնական քուէարկութիւն տեղի չէ ունեցած: Բացատրութիւնը միշտ ալ եղած է նոյնը՝ չվտանգել Ամերիկա-Թուրքիա բազմաշերտ եւ ռազմավարական կարեւորութիւններ կայացնող յարաբերութիւնները:

Այս օրերուն սակայն, Թուրքիոյ հետ Միացեալ Նահանգներու յարաբերութիւնները կը գտնուին ամենէն ցած կէտի վրայ ու կ'անցնին մեծ տագնապներ: Բազմաթիւ հարցերու մէջ երկու երկիրները կը գտնուին հակադիր դիրքերու վրայ: Հայկական ցեղասպանութեան ճանաչման բանաձեւի վաւերացումը չի կրնար մեծ ազդեցութիւն ունենալ արդէն իսկ անկումի մէջ գտնուող երկկողմ յարաբերութիւններուն վրայ: Անցեալին առաջ մղուած պատճառաբանութիւնները այս օրերուն ի գործ չեն եւ ժամանակը եկած է որպէսզի Կեդրոնական կառավարութիւնը հետեւելով 49 նահանգներու օրինակին վաւերացնէ Հայկական ցեղասպանութեան ճանաչման բանաձեւը եւ գայ միանալու երրորդական այն երկիրներու շարքին, որոնք վերջին տարիներուն անտեսելով Թուրքիայի բոլոր սպառնալիքները դիրքորոշուեցան պատմական արդարութեան կողքին:

Հերթը հասած է Ամերիկային տնի կանգնելու իր դաւանած բարձր սկզբունքներուն՝ պաշտօնապէս ճանչնալով Հայոց ցեղասպանութիւնը:

«ՄԱՍԻՍ»

Փաշինեան Եւտիպ Ամպիոնէն Կոչ Ըրաւ Եւրոպայի Խորհուրդին Աջակցելու Արցախի Ժողովուրդին



Հայաստանի վարչապետը ելոյթ կ'ունենայ Եւտիպ-ի ամպիոնէն

Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը կը շարունակէ կարեւորագոյն մարտահրաւէր մնալ Հայաստանի Հանրապետութեան եւ ընդհանրապէս տարածաշրջանի համար, Եւրոպայի խորհուրդի խորհրդարանական վեհաժողովին (ԵՆԽՎ) իր ելոյթի ժամանակ յայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Ան ընդգծեց որ, ինչպէս ցանկացած ժողովրդավարական կառավարութիւն, Հայաստանի կառավարութիւնը նուիրուած է հարցի բացառապէս խաղաղ կարգաւորման սկզբունքին:

«Բայց մեր երկրում տեղի ունեցած ժողովրդավարական փոփոխութիւնները նոր երանգներ են բերել նաեւ հարցի կարգաւորման

մեր պատկերացումների մէջ:

Ի հարկէ, չափազանց կարեւոր է, որ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ մենք կարողացել ենք բաւական կառուցողական եւ դրական երկխօսութիւն սկսել, բայց համոզուած ենք, որ միայն ղեկավարների միջեւ երկխօսութիւնը բաւարար չէ հարցը կարգաւորելու համար: Ծառ կարեւոր է, որ երկխօսութիւն մեկնարկի նաեւ հանրութիւնների միջեւ, որ մենք մեր հանրութիւններին պատրաստենք խաղաղութեան եւ ոչ թէ պատերազմի», - ըսաւ Փաշինեանը:

Վարչապետը վերահաստատեց Ղարաբաղի հարցի կարգաւորման

Շար.ը էջ 5

Հայաստանի Վարչապետն Ու Նախագահը Ցաւակցութիւն Յայտնեցին Նախագահ Մաքրոնին՝ Նոթր Տանի Ողբերգութեան Առթիւ

Փարիզի, ինչպէս նաեւ ամբողջ աշխարհի քրիստոնէական խորհրդանիշներէն եւ ճարտարապետական գլուխգործոցներէն մէկուն: Աստուածամօր տաճարին մէջ պատահած հրդեհին առթիւ, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանն ու ՀՀ նախագահ Արմէն Սարգսեանը ցաւակցական հեռագիր յղած են Ֆրանսայի Հանրապետութեան նախագահ Էմանուէլ Մաքրոնին:

Վարչապետի նամակին մէջ մասնաւորապէս, ըսուած է.

«Մեծարգոյ՝ պարոն Նախագահ, ցնցուած ենք Փարիզի մէջ տեղի ունեցած ողբերգութեամբ: Փարիզի Աստուածամօր տաճարը եւրոպական քաղաքակրթութեան եւ ողջ քրիստոնէական աշխարհի ամենանշանակալից եւ սիրուած խորհրդանիշներէն է: Հայերու համար անիկա Ֆրանսական մշակութիւն եւ հոգեւոր ժառանգութեան իւրատեսակ մարմնաւորում է, որուն հետ

մենք նոյնացուցած ենք Փարիզն ու անոր բազմադարեայ պատմութիւնը:

Հայաստան իր համերաշխութիւնը կը յայտնէ Ֆրանսացիներուն եւ կը կիսէ անոնց զգացումները:

Միաժամանակ լիպոյց ենք, որ բոլորիս համատեղ ջանքերով կը ձեռնարկուին անհրաժեշտ քայլեր: Եւրոպայի նախկին տեսքը վերականգնելու նպատակով»:

Նախագահ Սարգսեան իր ուղերձին մէջ ըսած է: «Փարիզի Աստուածամօր տաճարը, ուր պահուող գանձերն ու արուեստի ստեղծագործութիւնները չափազանց արժէքաւոր են, միշտ կանգուն եղած է: Վեհօրէն խորհրդանշելով Ֆրանսացի ժողովուրդին հարուստ մշակութային ժառանգութիւնը: Իմ կարեկցանքը կը յայտնեմ բարեկամ Ֆրանսացիներուն: Կիսելով անոնց զգացումները»:

Անգարա Դժգոհ Հայոց Ցեղասպանութեան Մասին Իտալիոյ Պատգամաւորներու Պալատի Բանաձեւէն

Պաշտօնական Անգարան կոշտ արձագանգած է Իտալիոյ Պատգամաւորներու պալատի կողմէն բանաձեւի ընդունմանը, որմով երկրի կառավարութեան կոչ կ'ընէ պաշտօնապէս ճանչնալ Հայոց ցեղասպանութիւնը եւ խնդրին տալ միջազգային հնչեղութիւն:

Իտալիոյ խորհրդարան պատգամաւորներու 382 կողմ, 0 դէմ եւ 48 ձեռնպահ ձայնով հաստատեց Հայոց Ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւը: Նշուած բանաձեւով երկրի կառավարութեան կոչ կ'ընեն «պաշտօնապէս ճանչնալ Հայոց ցեղասպանութիւնը» եւ խնդրին տալ միջազգային գնահատական:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը դատապարտած է իտալացի օրէնսդիրներու որոշումը՝ չեղտելով, թէ «այդ բանաձեւը հայկական պնդումները ներքաղաքական շահերու համար գոր-

Շար.ը էջ 5

Ֆրանսայի Նախագահը Ստորագրած է Ապրիլ 24-ը Հայոց Ցեղասպանութեան Յիշատակման Օր Հաստատելու Հրամանը

Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնը ստորագրած է Ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանութեան յիշատակման օր հաստատելու մասին հրամանը:

Փաստաթուղթի համաձայն այդ օրը Փարիզի մէջ պիտի կազմակերպուին յիշատակի միջոցառումներ: Որոշման կատարման համար պատասխանատու է Ֆրանսայի վարչապետը:

Ֆրանսան Հայոց ցեղասպանութիւնը ճանչցած է 2001-ին, օրէնքի ուժով, իսկ 2016-ին քրէականացուցած է Հայոց ցեղասպանութեան ժխտումը:

«Ֆրանսան այն երկիրն է, որ կը նախ պատմութեան առանց այն սքողելու: Ֆրանսան առաջիններէն էր, որ դատապարտեց հայ ժողովուրդի 1915 թուականի կոտորածները՝ իբրեւ մարդկութեան դէմ գործուած ոճիր, երկար պայքարէն ետք՝ 2001 թուականին, ընդունելով այն օրէնքով մը: Եւ այժմ այնպէս, ինչպէս ես յանձն առած էի, Ապրիլ 24-ը պիտի հռչակուի որպէս Հայոց ցեղասպանութեան նշանաւորման ազգային օր», - յայտարարած էր Էմանուէլ Մաքրոնը:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Պարուն Խոստովանեց Հայկական Օրակարգը

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Ատրպեյձանի նախկին արտգործնախարար Թոֆիկ Զուլֆուղարովը յայտարարել է, որ Հայաստանի հետ բանակցություններն անհիմատ է՝ Երեւանը պնդում է Արցախի բանակցային կողմ լինելու ձեռնարկը եւ փաստացի հրաժարում քննարկել տարածքներ յանձնելու օրակարգ: Երեւանը հարցը տանում է սառեցման, յայտարարել է Զուլֆուղարովը, ըստ այդմ անհեռանկար համարելով նախարարների մակարդակով հանդիպմանը որեւէ ակնկալիքը:

Զուլֆուղարովն իր կարծիքը յայտնել է Ապրիլի 15-ին Մոսկուայում սպասուող Մնացականեան-Մամեդեարով հանդիպման ընդառաջ, թէեւ Ատրպեյձանի նախկին արտգործնախարարը վերջին ամիսներին սկսել է բաւական յաճախ արտայայտուել եւ կարծիքներ յայտնել Արցախի հարցի վերաբերեալ: Ընդ որում, այդ կարծիքներն ունեն Ատրպեյձանի այսպէս ասած պաշտօնական քաղաքականութեան հետ որոշակի հակադրութիւն, քննադատական երանգ: Կան շրջանակներ, որ դա բացատրում են Զուլֆուղարովի «վերադարձի» հակակոնցենսուս արտգործնախարար-

րի պաշտօնին: Դիտարկում է նաեւ հնարաւորութիւնը, որ նրա դիրքորոշումները Ատրպեյձանի ներքին շահերի որոշակի հակասութիւնների արտայայտութիւն են:

Սակայն, արժէ դիտարկել թե՛րեւս նաեւ այն տարբերակը, որ Զուլֆուղարովը դարձել է Պաքուի ոչ պաշտօնական խօսափող, որն ասում է բաներ, որոնք հնարաւոր է ասել պաշտօնական մակարդակում, բայց միաժամանակ ասել պէտք է՝ հանրային տրամադրութիւններն ու մթնոլորտը կառավարելու համար:

Փաստացի, պաշտօնական մակարդակում խօսելով սեփական օրակարգն առաջ մղելու յաղթական դիւանագիտութեան մասին, Զուլֆուղարովի շուրթերով պաշտօնական Պաքուն բարբառում է իրականութիւնը, այդպիսով փորձելով վարժեցնել հանրային տրամադրութիւնը գործընթացի նոր ձեւաւորուող օրակարգի պայմաններին, որոնք գործնականում հեռու են ատրպեյձանական հռչակուած օրակարգից եւ նպատակներից: Այլ կերպ ասած, Պաքուն նախկին արտգործնախարարի շուրթերով վարժեցնում է ատրպեյձանական հանրութեան միտքն ու ականջը, այն պարագայում, երբ այդ ականջն ու

միտքը գրգռում է «յաղթական» հռետորաբանութեամբ:

Ատրպեյձանի իշխանութիւնն անկարող է նահանջել դրանից, անցնող տարիներին սահմանել է շատ բարձր նշանակող, բայց միաժամանակ հասկանում է, որ 2018-ի Ապրիլի-Մայիսից յետոյ Հայաստանի սահմանաձայն բարձր նշանակողի տակ է, եւ գործընթացը աստիճանաբար անցնում է հայկական օրակարգի ներքոյ, նաեւ մի շարք աշխարհաքաղաքական գործօններով պայմանաւորուած:

Այդ պայմաններում Զուլֆուղարովը փաստացի ապահովում է Պաքուի իշխանութեան նահանջի ճանապարհը, ասելով բաներ, որոնք պաշտօնական մակարդակում խոստովանել հնարաւոր չէ, սակայն պէտք է լսեցնել հանրութեանը, նոր իրավիճակին աստիճանաբար վարժեցնելու համար: Առաւել եւս, որ խաղաղ ինքնավստահութեան դիրքից Ատրպեյձանի հանրութեան հետ ակնյայտօրէն հեռակայ, անուղղակի երկխօսութեան մէջ է Հայաստանի իշխանութիւնը, ինչը այդ հանրութեան գիտակցութեան մէջ հարցեր է առաջացնելու սեփական իշխանութեան նկատմամբ:

Ընդ որում, յատկանշական է, որ Ատրպեյձանի նախկին արտ-

գործնախարարը, խօսելով բանակցութեան անհեռանկարութեան մասին, ակնարկելով, որ այն ընթանում է փաստացի հայկական օրակարգի գերակայութեամբ, չի խօսում պատերազմի մասին՝ որպէս ճանապարհ բանակցութեան անհիմատութեան պարագայում:

Դա եւս յատկանշական է, ինչն անկասկած պայմանաւորուած է նրանով, որ Ատրպեյձանի իշխանութիւնը չունի նաեւ այդ ճանապարհը: Դա չի նշանակում, որ հրաժարուել է այդ մտադրութիւնից կամ ռազմավարութիւնից: Չի հրաժարուել երբէք, բայց առնուազն առաջժմ չունի ճանապարհ:

Հայկական կողմը բնականաբար պէտք է արտաքին դաշտում սեփական օրակարգն առաջ մղելու գուզահեռ ներքին դաշտից էլ շարունակի փակել Ատրպեյձանի ռազմական որեւէ հնարաւորութեան ճանապարհ: Դա նշանակում է թոյլ չտալ ռազմա-քաղաքական բախանի խախտում, ինչպիսին թոյլ տրուեց նախորդ երկու տասնամեակում, հասունացնելով Պաքուի «պատերազմի իրաւունքը»: Ընդ որում, ռազմա-քաղաքական բախանը լոկ ռազմատեխնիկական համեմատելիութիւնը չէ, այլ նաեւ մի շարք ներքին ու արտաքին քաղաքական ու տնտեսական բաղադրիչներ, այդ թւում առանցքային լայն օրակարգով երկխօսութիւն միջազգային եւ ռեգիոնալ անվտանգութեան համակարգի դերակատար այլ ուժային կեդրոնների հետ:

Առայժմ Հայաստանի ընթացքը համարժէք է, ինչն էլ պայմանաւորում է իրավիճակին նախկին արտգործնախարարի համարժէք գնահատականների պարբերական առկայութիւնը:

«ԼՐԱԳԻՐ»

Չէք Հաւատում՝ Սերժ Սարգսեանին Հարցրէք, Կ'ասի

ԵՆԽՆՎ-ում վարչապետ Փաշինեանի ելույթը կարգին ներդրում էր հանրապետականներին: Նրանց դուր չէր եկել յատկապէս այն, որ վարչապետն, իրենց կարծիքով, պէտք եղածից աւելի շատ էր խօսել թաւաշայ յեղափոխութեան մասին՝ այն դէպքում, երբ եւրոպացիները դա առանձնապէս չի հետաքրքրում, եւ այդ «բրենդը» լաւ չի վաճառուում: Իրականում ժողովրդավարութիւնն, իհարկէ, ապրանք չէ, որ լաւ կամ վատ վաճառուի, եւ ժողովուրդն էլ յեղափոխութիւն չի արել յետագայում դրսում «թանկով ծախելու» համար, բայց եթէ անգամ ժողովրդավարութիւնը որպէս «ապրանք» ընկալենք, պիտի արձանագրենք, որ դրսում այն լաւ էլ թանկ է գնահատուում: Յիշենք դարաբաղեան պատերազմի տարիները, երբ հայկական զորքերն էին առաջ շարժուում, բայց քանի որ Հայաստանը տարածաշրջանում «ժողովրդավարութեան կրկնակ» էր՝ սանկցիաներն Ատրպեյձանի նկատմամբ էին կիրառուում: Ուրիշ բան, որ աւելի ուշ Հայաստանը ժողովրդավարութեան ոլորտում նահանջ արձանագրեց, եւ մենք կորցրեցինք այդ առաւելութիւնը: Բայց սա դեռ մի կողմ թողնենք:

Ընդդիմադիր շրջանակներն անընդհատ հասարակական գիտակցութեան մէջ ներարկում են այն միտքը, թէ տեսէք՝ Սերժ Սարգսեանը լաւ յարաբերութիւններ ունեն է՛ւ Ռուսաստանի հետ, ե՛ւ Արեւմուտքի հետ, իսկ հա՛ն Նիկոլ Փաշինեանը փճացրեց Ռուսաստանի հետ յարաբերութիւնները Ռոբերտ Քոչարեանին կալանաւորելու պատճառով, յետոյ էլ փորձեց հարթել կնճիւրը՝ Սիրիա գորախումբ ուղարկելով, ու փճացրեց յարաբերութիւնները նաեւ Արեւմուտքի հետ:

Իրականում խնդիրը աշխարհաքաղաքական այս կամ այն բեւեռի հետ յարաբերութիւնները փճացնել-չփճացնելը չէ, խնդիրը Հա-

յաստանի ինքնիշխանութեան մակարդակն է: Վերջին հաշուով՝ Սերժ Սարգսեանի արձանագրած «արդիւնքը» բոլորն ենք տեսել: Սկզբում նա «ասոցացուում էր» Եւրամիութեան հետ, ու Ռուսաստանը, որին դա դուր չէր գալիս, միլիարդաւոր տոլարներ սպառազինութիւն վաճառեց Ատրպեյձանին, յետոյ նա «փոշմանեց» ու մտաւ ԵԱՏՄ, բայց արդէն ուշ էր, եւ արդիւնքը եղաւ ապրիլեան պատերազմը (որին, ի դէպ նպաստել էր նաեւ ԵՆԽՎ ընդունած պրոատրպեյձանական բանաձեւը՝ նրանց էլ Սերժ Սարգսեանի «փոշմանելը» դուր չէր եկել):

Իսկ ի՞նչ են անում Հայաստանի այսօրուայ իշխանութիւնները: Պարզապէս փորձում են բարձրացնել մեր ինքնիշխանութեան մակարդակը: Ընդ որում՝ հասկանալով, որ արտաքին բեւեռներից որեւէ մէկին դա դուր չի գալու, որովհետեւ այդ բեւեռներից իւրաքանչիւրը փորձում է ոչ թէ պարզապէս նուազեցնել միւս բեւեռի ազդեցութիւնը Հայաստանի վրայ, այլ դրա փոխարէն մեծացնել ի՛ր մեթոդներով մեր բարձրացնելու Հայաստանի ինքնիշխանութեան մակարդակը: Տեսէք՝ Հայաստանի իշխանութիւններին դուր չեն գալիս Ռուսական լրատուամիջոցների արձագանքները Քոչարեանի շուրջ ծաւալուող իրադարձութիւնների վերաբերեալ, որովհետեւ Ռուսական կողմն ակնյայտօրէն փորձում է դա օգտագործել որպէս առիթ՝ Հայաստանի

ներքաղաքական պրոցեսների վրայ ազդելու նպատակով: Բայց իշխանութիւնները բաւականին կոշտ են արձագանքում նաեւ Հայաստանում Եւրամիութեան անդամ երկրների դեսպանների յայտարարութեանը՝ կոչանելով առաւել յարգանք ցուցաբերել մեր հասարակութեան հանդէպ եւ անհարկի չուղղորդել հանրային քննարկումները: Պարզ ասած, ե՛ւ Ռուսաստանի, ե՛ւ Արեւմուտքի դէպքում մեր դիրքորոշումը նոյնն է՝ «մեր գործերին շատ մի խառնուէք»:

Կարելի էր, իհարկէ, դրա փոխարէն անմիջապէս որեւէ պատրուակով ազատ արձակել Քոչարեանին ու յատուկ շեշտել, որ իրական պատճառը նրա եւ Փութինի անձնական յարաբերութիւններն են, կարելի էր ջերմօրէն ողջունել ԵՄ դեսպանների յայտարարութիւնը եւ անմիջապէս «ի կատարումն» տրանսպերենդները դէմ ցոյց անող մի քանի ակտիւիստի ձերբակալել, բայց պետութեան արժանապատուութեան եւ ինքնիշխանութեան հաշուին «բոլորի հետ լաւ լինելու» քաղաքականութիւնը, որպէս կանոն, աւարտուում է այդ նոյն «բոլորի» կողմից ըստ էութեան արտօմուած ապրիլեան պատերազմներով: Չէք հաւատում՝ Սերժ Սարգսեանին հարցրէք:

Իսկ ինքնիշխանութեան մակարդակի բարձրացումը, որքան էլ բարդ ու բոլոր կողմերից թիրախաւորուած, բայց երեւի միակ ճանապարհն է:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յոդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

Չեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԲՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իշխանութիւն Պահելու Համար Կռիւ Պիտի Չտանք. Վարչապետ Փաշինեան

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը կը բացատրէ, որ Սասուն Միքայէլեանի՝ Երկրապահ կամաւորականներու միութեան (ԵԿՄ) նախագահ ընտրուելով՝ կառուցը դարձեալ կուսակցականացուի:

«Առաջին խնդիրը, որ ես նաեւ աշխատանքային հանդիպումներում առաջ եմ քաշել, հետեւեալն է եղել, որ Երկրապահ կամաւորականների միութիւնը քաղաքական գործընթացների մէջ ընդհանրապէս պէտք է չենք քաշուի, որովհետեւ Երկրապահ կամաւորականների միութիւնը սկսել է խնդիրներ ունենալ այն պահից, երբ որ իշխանութիւնը օրինականութեան պակասի բերումով փորձել է այդ կառուցը օգտագործել իր իշխանութիւնը պահելու, երկարացնելու համար», - լրագրողներու հետ ձեպագրոցի ժամանակ ըսած է վարչապետը:

Աւելցնելով՝ ան նաեւ նշած է. «Ես հազար ներողութիւմ եմ խնդրում, ոչ մէկի հասցէին ուղղուած չէ, խնդրում եմ այլ կերպ չմեկնաբանել. մենք որեւէ գարտուղի աջակցութեան կարիք չունենք: Մենք ասել ենք՝ Հայաստանը ժողովրդավարական պետութիւն է, մենք իշխանութիւն պահելու կռիւ չենք տալու, չենք ճանկուելու, ծոկուելու, կեղծելու հարց չենք լուծելու: Այնպէս որ, այդ մեխանիզմների մասին ընդհանրապէս եկէք մոռանանք»:

Վարչապետը նկատած է, որ ԵԿՄ-ն ինք որոշած է՝ ով պիտի ըլլայ միութեան նախագահը: Նաեւ չի շեղուցած, որ Սասուն Միքայէլեանը արդէն իսկ յայտարարած է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան վարչութեան նախագահի կարգավիճակը թողելու մտադրութեան մասին:

Կուսակցութեան վարչութեան նախագահի պաշտօնին Փաշինեանը իրեն չի տեսներ: Հակակշիռներու ու փոխգաղափարներու մեխանիզմներու առումով ան այդ կարեւոր կը համարէ: «Մեր կուսակցութեան մէջ տասնեակ մարդիկ կան, ովքեր արժանիօրէն կարող են ստանձնել այդ կարգավիճակը», - փաստած է վարչապետը:

Խորհրդարանի Սերժեց Գոռ Յովհաննէսեանի Սահմանադրական Դատարանի Թեկնածուութիւնը

Հայաստանի Ազգային ժողովը մերժեց Գոռ Յովհաննէսեանի թեկնածութիւնը՝ որպէս Սահմանադրական դատարանի անդամ: Քուէարկութեան մասնակցած 101 պատգամաւորներէն 75-ը դէն քուէարկեցին Յովհաննէսեանի թեկնածութեան:

Իրաւաբանական գիտութիւններու դոկտոր Յովհաննէսեանի թեկնածութիւնը Սահմանադրական դատարանի դատաւորի թափուր պաշտօնին առաջադրած էր նախագահ Արմէն Սարգսեանը:

Առաջադրուած էին նաեւ Մարտ 1-ի գոհերու իրաւաբան Սերժեց Գոռը և Գրիգորեանը եւ փաստաբան Մարթին Մանուկեանը: Սակայն նախագահ Սարգսեանի ընտրութիւնը կանգ առած էր Գոռ Յովհաննէսեանի վրայ: Վերջինս կ'ապրի եւ կ'աշխատի Գերմանիա:

«Յարգելի խորհրդարան, ես

Փաշինեանը լրագրողներու հետ գրոցի ժամանակ անդրադարձած է նաեւ ռուսական պետական հեռուստաընկերութիւններու կողմէ իր հասցէին եղած մեղադրանքներուն, թէ ինք քաղաքական հետապնդումներ կ'իրականացնէ, եւ այդ կայանները մասնաւորապէս, կը չի շատակեն երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի գործը:

Հարցին, թէ ինք կ'ըսէ, որ Ռուսաստանի հետ յարաբերութիւնները նորմալ են, բայց փաստօրէն ռուսական հեռուստալիքներով նման քարոզութիւն կ'իրականացուի, Փաշինեանը պատասխանած է. «Կարծում եմ՝ յարաբերութիւնները ինչքան որ նորմալ լինելը հենց դա էլ նշանակում է, որ յարաբերութիւնները նորմալ են, բայց ռուսական հեռուստալիքները մեղադրում են ինչ-որ բանի մէջ: Ես կարող եմ ասել, որ ինչպէս հայաստանեան լրատուամիջոցներն են ազատ, այնպէս էլ ռուսական լրատուամիջոցներն են ազատ: Չնայած հիմա կարծիքներ կան, որ պէտք է օտարերկրեայ լրատուամիջոցները չի չքան հայաստանեան լրատուամիջոցները: Կարծում եմ, որ իւրաքանչիւր պետութիւն, իւրաքանչիւր հեռուստաընկերութիւն, նաեւ հեռարձակողները պէտք է շատ յստակ գիտակցեն, որ եթէ մենք այլ երկրի տարածքում հեռարձակում ենք, դա որոշակի ճշդապահութեան սահմաններ է ենթադրում, որը պէտք է պահպանուի»:

Հարցին, թէ հնարաւոր է, որ ռուսական պետական հեռուստաընկերութիւնները Հայաստանում սահմանափակ հեռարձակուեն, Նիկոլ Փաշինեանը պատասխանած է. «Ոչ, ես կարծում եմ, որ ռուսական հեռուստաընկերութիւններն այս խնդիրը հաշուի կ'առնեն եւ համապատասխան հետեւութիւններ կ'անեն: Բայց որեւէ մէկը միւսի կարծիք արտայայտելու իրաւունքը չի սահմանափակում: Հայաստանում էլ կան այդպիսի տեսակէտներ, ես կարծում եմ՝ գործը դատական փուլ կը մտնի, եւ միջազգային հանրութիւնը հնարաւորութիւն կ'ունենայ տեսնելու»:

միաժամանակ նաեւ գիտակցում եմ, որ ինքս որոշակի գոհողութեան եմ գնում իմ այս քայլով: Ես պատրաստ եմ հրաժարուել իրաւունքի ոլորտում առաջատար երկրում: Գերմանիայում, իմ գիտական աշխատանքից, իմ ընկերներից, իմ գործընկերներից եւ շատ այլ բաներից, եւ դա միայն մէկ նպատակի համար: Ես ուզում եմ իմ ներդրումն ունենալ հայկական իրաւունքի զարգացման մէջ», - մինչեւ քուէարկութիւնը ըսած էր Գոռ Յովհաննէսեանը:

«Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւոր Նիկոլայ Պաղտասարեանը պարզաբանած է, որ Գոռ Յովհաննէսեանի փաստաթուղթերը պատշաճ ներկայացուած չեն, ինչը կ'սակարհի տակ կը դնէ այն պահանջը, որ թեկնածուն 15 տարուայ մասնագիտական աշխատանքի փորձառութիւն պէտք է ունենայ:

Սիիրան Պողոսեանի Դէմ Յայտարարուած Է Հետախուզում

Հանրապետական կուսակցութեան (ՀՀԿ) նախկին պատգամաւոր, Դատական քննչի հարկադիր կատարման (ԴԱՀԿ) ծառայութեան նախկին ղեկավար Միհրան Պողոսեանը օֆշորի գործով ներգրաւուած է որպէս մեղադրեալ, «Ազատութեան» փոխանցած է Յատուկ քննչական ծառայութեան (ՅՔԾ) խօսնակ Մարինա Օհանջանեանը:

Ըստ ՅՔԾ-ի Պողոսեանին մեղադրանք առաջադրուած է այն արարքներու համար, որ ան, օգտագործելով պաշտօնէական դիրքը, վատնման եղանակով առանձնապէս խոշոր չափերով գոյք յափշտակած է եւ չարաշահած է իր պաշտօնէական լիազօրութիւնները, ինչը առաջացուցած է ծանր հետեւանքներ:

Ըստ մեղադրանքի, Միհրան Պողոսեանը, 11 Յունուար 2008-էն զբաղեցնելով Դատական քննչութեան գլխավոր հարկադիր կատարողի պաշտօնը, իր անձնական անվտանգութիւնը ապահովող անձին նշանակած է ԴԱՀԿ ծառայութեան կեղերական մարմնի հարկադիր կատարման բաժնի առաջին կարգի խորհրդատու, իսկ անձնական վարողին՝ նոյն բաժնի առաջատար խորհրդատուի պաշտօնին: Անոնք փաստացի աշխատանքի չեն յաճախած եւ համապատասխան պարտականութիւններ չեն իրականացուցած, այլ կատարած են Միհրան Պողոսեանի անձնական բնօրէնի յանձնարարութիւնները, սակայն վերջինիս յանձնարարութեամբ ստացած են աշխատավարձ, ընդհանուր՝ 44,19,463 դրամի չափով:

«Աւելին, 2011-ին Միհրան Պողոսեանը օտարերկրեայ քաղաքացիների միջոցով Փանամայի Հանրապետութիւնում հիմնադրել է ձեռնարկատիրական գործունէութիւն իրականացնող «Հոփքինթըն



ՀՀԿ նախկին պատգամաւոր Սիիրան Պողոսեան

թրեյտինկ ինքորփորէյթըտ» եւ «Սիլթըմ ռիլ եսթէյթ ինքորփորէյթըտ» ընկերութիւնները, իսկ նոյն տարուայ Հոկտեմբեր ամսին նրա անմիջական մասնակցութեամբ ընկերութիւնների օտարերկրացի տնօրէնների փոխարէն համապատասխան պաշտօններում նշանակուել են Միհրան Պողոսեանի մտերիմ անձինք: Այնուհետեւ Միհրան Պողոսեանը վատահաւած անձանց միջոցով մասնակցել է Փանամայի օֆշորային գոտում գրանցուած վերջիշեալ կազմակերպութիւնների կառավարմանը, ինչի արդիւնքում վերջիններս Հայաստանում հիմնադրել են այլ ընկերութիւններ, այդ թւում՝ «Պեսթ ռեալթի» ՍՊԸ-ն», - ըսուած է հարցազրույցի մէջ:

Ծառայութիւնը կը նշէ, որ 13.04.2019-ին ՀՀ Յատուկ քննչական ծառայութեան քննչի կողմէն միջնորդութիւն ներկայացուած է Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարան՝ Միհրան Պողոսեանի նկատմամբ կալանաւորումը որպէս խափանման միջոց ընտրելու համար: Անոր նկատմամբ յայտարարուած է հետախուզում:

«Հոկտեմբեր 27»-ի Հետ Կապուած Մէկ Մասով Մեղադրանք Միշտ Հնչեցուցած Եմ Ռոպերթ Քոչարեանի Դէմ . Ա. Քոչարեան

Ազգային ժողովի (ԱԺ) «Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւոր, ԱԺ պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ, պաշտպանութեան նախկին փոխնախարար Անդրանիկ Քոչարեանը կը հերքէ այն տեղեկութիւնները, ըստ որոնց՝ 1999 թուականի Հոկտեմբեր 27-ին տեղի ունեցած սպանութիւններու իրագործումը ինքը վերագրած է Ռուսաստանի Դաշնութեան նախագահ Վլատիմիր Փութինին ու ռուսական յատուկ ծառայութիւններուն:

«Այդպիսի անհեթեթ բան պետական կառույցները երբեւիցէ իրենց թոյլ տալ չեն կարող, որովհետեւ ո՛չ քննութիւնն է աւարտուել 27-ի հետ կապուած», ոչ էլ կարելի է նախաքննական մարմնի նիւթերի արանքում հղապիսի ենթադրութիւններ անել», - ընդգծած է ան:

Անդրանիկ Քոչարեանի համաձայն Հայաստանի Հանրապետութեան որեւէ պաշտօնական յայտարարութիւն չէ եղած, եւ իրեն կապուող տեղեկութիւնները պատգամաւորը որակած է որպէս սադրիչ, որոնք ուղղուած են հայ-ռուսական ռազմավարական յարաբերութիւնները փշաջնելու նպատակով:



«Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւոր Անդրանիկ Քոչարեան

«Հոկտեմբեր 27»-ի հետ կապուած եւ մեղադրանք միշտ հնչեցրել եմ պարոն Ռոպերթ Քոչարեանի ուղղութեամբ այն մասով, որ երբեւիցէ մեզ համար հասկանալի չի եղել պարոն Ռոպերթ Քոչարեանի եւ Նայիրի Յունանեանի այդ օրուայ հանդիպման եւ զրոյսապատճառները, եւ քննարկուած նիւթը», - առանձնացուցած է ան՝ նշելով իր այն ցանկութիւնը, ըստ որում՝ այդ հանգամանքի ուսումնասիրութեան վրայ ուղղութիւն դարձուէր:

ԼՈՒՐԵՐ

Վրաստանի Նախագահը Ջախսահայերուն Կրացերէն Սորվելու Կոչ Ըրած Է



Վրաստանի Նախագահ Սալոմէ Զուրաբիշվիլին Ախալքալաք կատարած այցի ընթացքին

Ախալքալաք կատարած այցի շրջանին Վրաստանի նախագահ Սալոմէ Զուրաբիշվիլին ջախսահայերուն վրացերէն սորվելու կոչ Ըրած է:

«Ես շատ կ'ուզեմ, որ թէ դուք եւ թէ ձեր երեխաները Վրաստանի լիբրալ քաղաքացիներ դառնաք: Այդ իսկ պատճառով ես այդքան ջանք գործադրեցի, որպէսզի Վրաստանի մէջ օրինականացուի երկքաղաքացիութիւնը: Այդ լրացումը տեղ գտաւ Սահմանադրութեան մէջ, եւ այսօր իւրաքանչիւրը կրնայ վերականգնել իր վրացական քաղաքացիութիւնը: Անոր համար դուք պէտք է մէկ քայլ կատարէք՝ սորվիք պետական լե-

զուն: Լեզուին տիրապետէք գոնէ այնպիսի համեստ մակարդակով, որ կարենաք յանձնել այն փոքրիկ քննութիւնը, որով կ'ուղեկցուի քաղաքացիութեան վերականգնման գործընթացը: Այդ խորհրդանշական է բայց շատ կարեւոր», - յայտարարած էր Վրաստանի նախագահը:

Սալոմէ Զուրաբիշվիլին Ախալքալաք ժամանած էր մայրենի լեզուի օրուայ տօնակատարութեան առթիւ:

Այցի ընթացքին ան մասնակցած է նաեւ Ախալքալաքի մշակույթի տան պատին վրացական այբուբէնի տառերը պատկերող յուշարձանի բացման:

Թուրք Պատգամաւոր. «Պէտք է Արգելափակել Քոնկրետին Մէջ Հայկական Օրինագիծը. Այս Տարի Վիճակը Լուրջ Է»

Այժմեան Թուրքիոյ կազմին մէջ գտնուող Արտահայերի շրջանին ընտրուած անկախ պատգամաւոր Օզթուրք Եըլմազ ԱՄՆ-ի Քոնկրէսին ու Ծերակոյտին մէջ ներկայացուելիք Հայոց Յեղասպանութեան վերաբերեալ բանաձեւերուն թեմատիկ ասուլիս մը տուած է: Այս մասին կը հաղորդէ «Ermenihaber»-ը:

Խորհրդարանին մէջ տեղի ունեցած ասուլիսին ժամանակ: Եըլմազ յայտարարած է, որ պէտք է անյապաղ միջոցներ ձեռնարկել ԱՄՆ-ի Քոնկրէսին ու Ծերակոյտին մէջ Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող բանաձեւերու քննարկումը արգելափակելու ուղղութեամբ:

Թուրք պատգամաւորը նշած է, որ Ֆրանսայի ու Իտալիոյ մէջ ցեղասպանութեան հարցով տեղի ունեցած զարգացումներէն ետք: հաւանականութիւն կայ, որ ԱՄՆ-ի Ծերակոյտին մէջ ալ կրնան բանաձեւ ընդունուիլ: յիշեցնելով, որ աւելի վաղ նմանատիպ բանաձեւ նոյնպէս ներկայացուած էր, սակայն յաջողուած էր արգելափակել գալն:

Ըստ Եըլմազի: բանաձեւերու ընդունման պարագային ԱՄՆ-ը «այսպէս կոչուած Հայոց Յեղասպանութիւնը պաշտօնապէս կը ճանչնայ իբրեւ ցեղասպանութիւն», որմէ ետք կը դադրեցնէ համագործակցութիւնը գալն ժխտողներուն հետ ու այդ թեմատիկ դասեր կ'աւելցնէ երկրի ուսումնական հաստատութիւններուն մէջ:

«Այս տարի իրավիճակը լուրջ է եւ տարբեր նախորդ տարիներէն:



Թուրք Պատգամաւոր Օզթուրք Եըլմազ

Քանի որ S-400-ներու, Սուրիոյ ու Ֆեթօ-ի (FETO-ԱՄՆ բնակող Ֆեթուլլահ Կիւլէնի ղեկավարած կազմակերպութիւն, որ Թուրքիոյ մէջ ասպեկէական կը համարուի) հարցով ԱՄՆ-ի հետ տարբեր ուղղութիւններով կը շարժինք:

Քոնկրէսի մէջ Թուրքիոյ վերաբերեալ կը տիրէ բացասական մթնոլորտ: S-400-ներու թեման ճգնաժամի վերածած ԱՄՆ-ի որոշ ղեկավար շրջանակներ, Ապրիլ 24-ին, այսպէս կոչուած Հայոց Յեղասպանութիւնը կ'ուզեն բերել Թուրքիոյ օրակարգ ու այդ թեմատիկ միջոցով կ'ուզեն Թուրքիոյ դարպասէն ներս», - ըսած է Թուրք պատգամաւորը: կառավարութեան կոչ ընելով ամէն զնով խոչընդոտելու այդ գործընթացը:

Ղարաբաղեան Հարցով Մոսկուայի Մէջ Կայացած Են Փակ Բանակցութիւններ



Հայաստանի, Ատրպէյճանի եւ Ռուսաստանի արտաքին գործոց նախարարները Մոսկուայի հանդիպումներուն առթիւ

Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութեան մէջ տեղի ունեցած են ղարաբաղեան խնդրի կարգաւորման նուիրուած շարք մը հանդիպումներ. նախ հանդիպած են Հայաստանի եւ Ռուսաստանի արտաքին գործոց նախարարները, այնուհետեւ կայացած են Հայաստանի, Ատրպէյճանի եւ Ռուսաստանի արտաքին գործոց նախարարներու եռակողմ ձեւաչափով բանակցութիւնները, որուն այնուհետեւ միացած են նաեւ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահներ Իկոր Փոփովը (Ռուսաստան), Էնտրիկ Շոֆըրը (ԱՄՆ), Սթեֆան Վիսթրոմը (Ֆրանսա) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ Անճէյ Քասիչիքը:

Մինչ այդ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահները եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնակազմի ներկայացուցչը ընդունած էր Ռուսաստանի արտաքին գործոց փոխնախարար Կրիկորի Քարասինը:

Ռուսական արտաքին քաղաքականութեան գերատեսչութեան տարածած կարճ հաղորդագրութեան համաձայն, Քարասինի հետ հանդիպման ժամանակ քննարկուած է բանակցային գործընթացի ներկայիս փուլն ու համանախագահող երեք երկիրներու ջանքերու համակարգումը:

Աւելի վաղ ռուսական ԹԱՍՍ գործակալութիւնը գրած էր, որ այս հանդիպումը կ'իրականացուի Ատրպէյճանի եւ Հայաստանի ղեկա-

վարներու՝ Վիեննայի մէջ 29 Մարտին կայացած «առաջին պաշտօնական բանակցութիւններու լոյսի ներքոյ»:

Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գերատեսչութիւններու ղեկավարներու յառաջիկայ հանդիպման մասին յայտնի դարձած էր Վիեննայի մէջ 29 Մարտին կայացած հանդիպումէն անմիջապէս ետք: Իսկ 6 Ապրիլին Մոսկուայի մէջ Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրովի հետ ունեցած բանակցութիւններէն ետք Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարը յայտարարած է, որ հանդիպումը Մոսկուայի մէջ պիտի կայանայ եռակողմ ձեւաչափով՝ Մնացականեանի հետ հանդիպման ներկայ պիտի ըլլայ նաեւ Սերկէյ Լաւրովը:

Յիշեցնենք՝ Վիեննայի մէջ կայացած բանակցութիւններէն ետք նախ Հայաստանի վարչապետը զանգած էր Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինին եւ ներկայացուցած բանակցութիւններու ընթացքը, իսկ յաջորդ օրը Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը զանգած էր Փութինին:

Լաւրովը հանդիպման կը մասնակցի որպէս ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահող երկրի արտաքին գործոց նախարար, հանդիպման նախօրէին յայտարարած էր Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակ Աննա Նաղտալեանը:

Եւրոպայի Ատրպէյճանի եւ Եւրոպական Երկիրներու մէջ Կաշառակերութեան Մասին Բանաձեւ Ընդունած Է

Եւրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը (ԵՆԽՎ) Ատրպէյճանի եւ եւրոպական երկիրներու մէջ կաշառակերութեան եւ փողերու լուսացման մասին բանաձեւ ընդունած է:

«Լուսացատուն. ի պատասխան կազմակերպուած յանցագործութեան, կաշառակերութեան եւ փողերու լուսացման դէմ միջազգային պայքարի հարցով ստեղծուած նոր մարտահրաւէրները» վերտառութեամբ գեկոյցը հեղինակած է հոլանտացի պատգամաւոր Մարթ վան տէ վենը:

Փաստաթուղթին մէջ նշուած է, որ Եւրոպայի խորհուրդը անհանգստացած է «ատրպէյճանական լուսացատան» գեկոյցով, ուր կը խօսուի խոշոր գումարներու լուսացման, Ատրպէյճանի ներկայացուցիչներու կողմէ եւրոպացի գոր-

ծիչները եւ պատգամաւորները կաշառակերութեան մասին: «Այն եղած է Ատրպէյճանի իշխանութիւններու շահերը Եւրոպայի խորհուրդին մէջ առաջ մղելու նպատակով», - նաեւ ըստած է ԵՆԽՎ-ի կողմէ նախօրէին ընդունուած բանաձեւին մէջ:

Զեկույցին մէջ նշուած է, որ ԵՆԽՎ-ը խորապէս մտահոգուած է այդ նպատակներու համար Ատրպէյճանէն դուրս բերուած շուրջ 3 միլիարտ տոլարի կապակցութեամբ:

Փաստաթուղթի հեղինակի համոզմամբ՝ Ատրպէյճանի մէջ փտածութեան պատճառներէն մէկը անկախ քաղաքացիական հասարակութեան, լրատուամիջոցներու գործունէութիւնը կասեցնելն է, որոնք վերահսկիչ դեր կրնան ունենալ յանցաւոր գործարքներուն դէմ:

Կարո Փայլան. Հայոց Ցեղասպանութեան Հարցը Պէտք է Բերել Թուրքիոյ Խորհրդարանի Օրակարգ



Թուրքիոյ խորհրդարանի Ժողովուրդներու ղեմնկրատական կուսակցութեան հայազգի պատգամաւոր Կարո Փայլան անդրադարձած է իտալիոյ Պատգամաւորներու պալատի կողմէն Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ ընդունուած բանաձեւին եւ անոր յաջորդած Անգարայի խիստ արձագանքին:

Սպանիոյ Պուրկոսի Քաղաքային Խորհուրդը Ճանչցած է Հայոց Ցեղասպանութիւնը

Սպանական Պուրկոս քաղաքի քաղաքային խորհուրդը ճանչցած է Հայոց ցեղասպանութիւնը: Որոշումն ընդունուած է միաձայն:

Փաշինեան ԵտևՎ Ամպիոնէն Կոչ Ըրաւ

Շարունակուած էջ 1-էն

որեւէ տարբերակ պէտք է ընդունելի ըլլայ Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի եւ Ատրպէյճանի ժողովուրդի համար:

«Այս կազմակերպութիւնը, որ նախանձախնդիր է Եւրոպայում մարդու իրաւունքների եւ ժողովրդավարական ինստիտուտների զարգացման համար, գրո ուղարկութիւն է դարձնում Լեռնային Ղարաբաղում գործող հասարակական կազմակերպութիւններին աջակցելու խնդրին:

ԵտևՎ-ն բնաւ որեւէ միջոց չի ձեռնարկում Լեռնային Ղարաբաղում ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման եւ քաղաքացիական հասարակութեան կայացման համար:

Սրա բացատրութիւնն այն է, որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերեալ հակասութիւններ, տարընթերցումներ կան, որ Լեռնային Ղարաբաղը միջազգայնօրէն ճանաչուած չէ որպէս պետութիւն:

Բայց խօսքը ԵՆ-ի եւ ԵտևՎ-ի անելիքի առումով պետական կարգավիճակի մասին չէ: Եթէ Լեռնային Ղարաբաղը ղեռնու միջազգայնօրէն ճանաչուած չէ որպէս անկախ պետութիւն, միթէ՞ Լեռ-

ցեղասպանութիւնը այլեւս չըլլայ իտալիոյ, Ֆրանսայի, ԱՄՆ-ի խորհրդարաններու թեմայ, այն պէտք է բերել Թուրքիոյ խորհրդարանի օրակարգ՝ երկրի մը, ուր տեղի ունեցած է այդ ոճիրը:

Հայազգի պատգամաւորը համոզունք յայտնած է, որ հայ ժողովուրդի վէրքը կրնայ ամօքել միայն Թուրքիոյ մէջ հաստատուած արդարութիւնը: «Անատոլիայի հայերը 104 տարի է արդարութեան կը սպասեն», - գրած է Փայլան:

նալու մասին միջնորդութիւնը», - կ'ըսուի Պուրկոսի քաղաքային խորհուրդի թուրքերեան էջին վրայ:

Այսպիսով, Պուրկոսը դարձաւ 34-րդ սպանական քաղաքը, որ ճանչցած է Հայոց ցեղասպանութիւնը:

նային Ղարաբաղում ապրող մարդկանց մարդ լինելու վերաբերեալ միջազգային բանավէճ կայ: Միթէ՞ մարդու իրաւունքների պաշտպանութեան համաշխարհային առաջամարտիկներին մէկի՞ Եւրոպայի խորհրդի համար առաջնայինը փաստաթուղթն է եւ ոչ թէ իրական մարդը:

Եւ այս բարձր ամպիոնից ուզում եմ կոչ յղել Եւրոպայի խորհրդի եւ ընդհանրապէս Եւրոպայի բոլոր այն կազմակերպութիւններին, որոնք զբաղուած են մարդու իրաւունքների, խօսքի ազատութեան պաշտպանութեամբ, ժողովրդավարական ինստիտուտների կայացմամբ:

Աջակցէք Լեռնային Ղարաբաղի ժողովրդին՝ կատարելագործելու իրենց օրէնքներն ու ինստիտուտները, ամրապնդելու մարդու իրաւունքները, օրէնքի գերակայութիւնն ու անկախ դատական համակարգը: Դրանից շահելու է քաղաքացին՝ մարդը: Իսկ մարդն աւելին է, քան որեւէ փաստաթուղթ, քան որեւէ քաղաքական կամ խմբային շահ, եւ ես հատուկ եմ, որ Եւրոպայի խորհուրդը, Եւրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը կ'առաջնորդուի այս արժէքներով», - ըսած է վարչապետը:

Վարագավանքը՝ Աւերման Վտանգի Առջեւ



Վանի կարելոր պատմական արժէքներէն մէկը համարուող Վարագավանքը պահպանութեան տակ չէ առնուած, որուն պատճառով վանքի կանգուն մնացած հատուածներն ալ աւերման վտանգի տակ կը գտնուին: Այս մասին, ըստ Akunq.net-ի, կը հարողդէ «Վան փոսթասը» թերթը:

8-11-րդ դարերուն կառուցուած պատմական Վարագավանքը կը գտնուի Վարագայ լեռան փէշէրուն: Ժամանակի ընթացքին քանդուող պատմական եկեղեցուց զմբէթը 2011-ի երկրաշարժի պատճառով քանդուած էր:

Յօդուածին մէջ մասնաւորապէս կ'ըսուի «Երբ զբօսաշրջիկները կը նային պատմական եկեղեցուց հին նկարներն ու զայն կը համեմատեն իրենց հանդիպած տեսարանին հետ, կը ցնցուին: Հատ ու կենտ կանգուն պատերու մնացորդներէն բացի այլ կանգուն հատուած չէ մնացած: Պատմական կառուցցին մէջ մզկիթի ու մզկիթի գուզարա-

նի մը գոյութիւնը զարմանք կ'առաջացնէ զբօսաշրջիկներուն կողմէ: Կանգուն մնացած հատուածներու բանալիները գիւղի իմամին մօտ են, իսկ այն պնդումները, որ պատմական կառուցցին պատկանող քարերը, գիւղացիները կ'օգտագործեն տուներու ու պարտէզներու կառուցման մէջ, ցոյց կու տան եկեղեցուց ամենաթող վիճակը: Այցելուներն ալ իրենց հերթին կ'ըսեն, որ եթէ եկեղեցին իր նախկին տեսքը պահպանէր, գիւղի ու շրջակայքի ճակատագիրը կրնար փոխուիլ»:

Ըստ յօդուածագիրին, նախորդ տարիներուն օրակարգի վրայ էր եկեղեցուց վերանորոգման նախագիծը եւ անոր մէջ կառուցուած մզկիթը քանդելու, մէկ այլ յարմար վայրի մէջ նորը կառուցելու նախագիծը, սակայն այդ ուղղութեամբ մինչեւ այսօր որեւէ յստակ քայլ չէ առնուած, սպասում ալ չկայ, որ կը կատարուի:

Պատրաստեց Անի Մեղքոնեան

Անգարա Դժգոհ

Շարունակուած էջ 1-էն

ծիք դարձնելու հերթական օրինակն է»:

Թուրքիոյ նախագահի խօսնակ Իպրահիմ Քալըն եւս արձագանգած է Իտալիոյ խորհրդարանի ստորին պալատի ընդունած բանաձեւին: Քալըն իր «Թուրքերեան» էջին գրած է. - «Այսպէս կոչուած Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ որոշումը կ'անտեսէ պատմական իրողութիւնները եւ նոր թշնամութիւն կը սերմանէ: Մենք խստօրէն կը դատապարտենք պատմաբաններու համատեղ յանձնաժողովը»:

ղով ստեղծելու մեր նախագահի կոչը անտեսող այս մօտեցումները»:

Թուրքիոյ նախագահի աշխատակազմի հանրային կապերու բաժնի ղեկավար Ֆախրըտտին Ալթունը եւս դատապարտած է Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւի ընդունումը: «Մենք խստօրէն կը դատապարտենք մեր պատմութիւնը խեղաթիւրելու եւ քաղաքականացնելու իտալիոյ խորհրդարանի ջանքերը: Սա անօգուտ, թշնամական եւ ցաւալի մօտեցում է», - իր «Թուրքերի» էջին գրած է Ալթունը:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State: ----- Zip Code: -----
Country: -----
Tel: ----- Email: -----

Առաջնորդ Սրբազան Հոր Սուրբ Ջատկական Քարոզը

«Յամենայն ժամ զմահն Յիսուսի ի մարմին մեր կրեսցուք, զի եւ կեանքն Յիսուսի ի մարմինս մեր յայտնեսցին... Այսուհետեւ մահ ի մեզ գորանայ, եւ կեանք՝ ի ձեզ»:

(Բ. ԿՈՐՆԹ. 4:10-11)

Սուրբ Ջատկա կը տօնախմբենք այն խոր հաւատքով, որ Քրիստոսի Սուրբ Յարութեան խորհուրդով Աստուածորդու կեանքը կը յայտնուի մեր մարմիններուն մէջ: Ինչպէս Պօղոս Առաքեալը կ'ըսէ, «Քանի դեռ կենդանի ենք, միշտ մահուան կը մատնուինք Յիսուսի համար, որպէսզի Յիսուսի կեանքն ալ յայտնուի մեր մահկանացու մարմիններուն մէջ»: Մարդն իր տկար բնութեամբ, անտարակոյս, անհրաժեշտութիւնը կը զգայ առ Աստուած բարձրանալու, աստուածային էութենէ մասնիկ մը իր մէջ կրելու եւ անով մաքրագործուելու: Ասիկա մարդկային այն զգացողութիւնն է, որով ոչ միայն մեր մէջ կը զգանք Վարդապետին կենդանի ներկայութիւնը, այլեւ՝ փափաքը ստեղծագործ կեանքով ապրելու:



ին, երբ թշնամին փորձեց խոցել Մայր Հայաստանի եւ Արցախի սահմանները, մեր քաջարի զինուորները մահուան ընդառաջ գացին, որպէսզի, ինչպէս Պօղոս Առաքեալը կ'ըսէ՝ «մե՛ր մէջ գորանայ կեանքը»: Անոնք Քրիստոսի մահն ընդունեցին, որպէսզի մենք կեանք ունենանք եւ շարունակենք մեր վերելքը Քրիստոսի Յարութեան խորհուրդով: Մեր քաջ զինուորներն իրենց մէջ Քրիստոսի մահը կրեցին՝ մեզի թողլով տեսիլքը յարուցեալ ու յաղթական Հայաստանի:

Նոյն գիտակցութեամբ, հայ Սփիւռքը կը տոկայ դժուարութիւններու դիմաց, իր վրայ ընդունելով անթիւ-անհամար հարուածներ, որպէսզի սերունդներուն իմաստը Մայր Հայրենիքի, Սուրբ Էջմիածնի խորխորհուրդ սիրով՝ Հայ Եկեղեցիի ու Հայ Դպրոցի միջոցաւ:

Սիրելի՛ հայրերիներ, Սուրբ Ջատկի առիթով մեր կոչն է, որ Ձեր կեանքն առաջնորդէք Քրիստոսի Աւետարաններէն ճառագող պատգամներով: Թող Յարութեան տօնը արթնութեան հրաւեր ըլլայ մեզ բոլորիս: Խորամուխ ըլլանք Պօղոս Առաքեալի պատգամին եւ ամուր պահենք մեր հաւատքը, մինչ աշխարհը փորձութեանց բովէն կ'անցնի:

Սիրելի՛ հաւատացեալ ու հայրենասէր գաւազներ մեր ազգի, ամիսներ առաջ Հայոց Հայրապետը 2019 թուականը յայտարարեց հայ քրիստոնէայ ընտանիքի տարի: Իսկ մեր թեմէն ներս 2019ը նուիրուած է հայ զբոսի: Ուրեմն, մեր բոլորիս հոգու պարտքը պիտի ըլլայ հայ ընտանիքները լուսաւորել հաւատքի ու ժառանգութեամբ, ստեղծագործ կեանքի տեսիլքով եւ պատմութեան անթառամ դասերով: Եթէ այդպէ՛ս ապրինք մեր կեանքը, կրողը կը դառնանք Քրիստոսի կեանքին, այսինքն՝ Յարութեան խորհուրդին: Մեր ամէն մէկ քայլը, խօսքն ու արարքը պիտի արտայայտէ վճռական հաւատքը մեր նախնեաց, հաւատքը նահատակներուն, որոնք տեսիլքը ունեցան գալիք սերունդներու հոգիին մէջ տեսնել նոր արշալոյսը մեր կեանքին: Քրիստոսի Յարութեան խորհուրդով ներշնչուած՝ մեր գաւազան կեանքին մէջ հաստատենք աղօթքին սէրը եւ զօրութիւնը, որպէսզի անոնք իրենց արեան մէջ զգան պատգամը մեր նախնեաց եւ Աստուածապարգեւ կեանքն իսպառ նուիրաբերեն մեր հայրենական հո-

Հայ Աւետ. Համաշխարհային խորհուրդի Ս. Ջատկուայ Պատգամը

Յիսուս Քրիստոսի Յարութիւնը պատմական եզակի դէպք մըն է, որուն վրայ հիմնուեցաւ Քրիստոնէական Եկեղեցին: Եթէ Յիսուս յարութիւն առած չըլլար՝ գուցէ սոսկ կրօնական նահատակ մը պիտի ըլլար, բայց ոչ տիեզերական Փրկիչը մարդկութեան: Հաւանաբար ան պիտի ճանչցուէր իբրեւ հանճարեղ մարգարէ մը, կամ փիլիսոփայ մը, որ իր ուսուցած վարդապետութեան եւ համոզումներուն համար իր կեանքը զոհած էր:

Քրիստոնէայ Եկեղեցին քսան դարերէ ի վեր հռչակած է Քրիստոսի Յարութիւնը իբրեւ պատմական անհերքելի դէպք: Քրիստոսի աշակերտները առաջին վկաներն էին անոր յարութեան: Անոնք երեք տարիներ շարունակ աշակերտած էին անոր, լսած էին անոր պատգամները, տեսած էին անոր հրաշագործութիւնները, հուսկ ականատես եղած էին անոր խաչելութեան, մահուան եւ թաղման: Բնականաբար, Յիսուսի խաչելութիւնն ու մահը խորապէս ցնցած էին իրենց ներաշխարհը: Ահաւոր էր իրենց ցաւը: Վախն ու անոր առթած շփոթութիւնը ընկճած էին անոնց հոգիները:

Երեք օր յետոյ, սակայն, արտակարգ դէպք մը պատահած ըլլալու էր անոնց յուսահատութիւնը, դառնութիւնն ու վախը փարատելու, անոնց վիշտն ու ցաւը ամոքելու եւ անոնց խախտած հաւատքը վերականգնանալու համար: Այդ արտակարգ դէպքը Քրիստոսի Յարութիւնն էր: Այո՛, Յարութեան դէպքը, Ջատկուայ հրաշքը, Յիսուսի աշակերտներու անձերուն եւ նկարագիրներուն մէջ արմատական փոփոխութիւն մը յառաջացուցած էր: Արդարեւ, իր խաչելութենէն երեք օր ետք, Կիրակի առաւօտուն Արեմաթիացի Յովսէփի դամբանին մէջ, ուր Յիսուս թաղուած էր, հրաշք մը պատահած էր... Քրիստոս յարութիւն առած էր...:

Յիսուսի թափուր գերեզմանը, անոր հրաշափառ Յարութեան դէպքը լիովին յեղաշրջած էր աշակերտներուն կեանքը: Անոնց յուստեսութիւնը տեղի տուած էր լաւատեսութեան: Անոնք թօթափած էին ամէն անձկութիւն եւ յուսաբեկութիւն եւ խանդով ու աւրելով, հաւատքով ու վճռականութեամբ սոփոգուած՝ յարուցեալ Յիսուս Քրիստոսի աննահանջ ախոյեանները դարձած էին:

Յարուցեալ Քրիստոսի քառասնօրեայ երեւումները անոր աշակերտներուն եւ հետեւորդներ-



րուն աւելի եւս ամրապնդած էր անոնց հաւատքը: Ա՛յդ հաւաքական հաւատքէն էր որ ծնաւ Քրիստոնէական Եկեղեցին: Եկեղեցին ալ, իր հերթին, ծնունդ տուաւ Աւետարաններուն եւ Նոր Ուխտի միւս գիրքերուն:

Ջատկուայ հրաշքը, ոչ միայն Յիսուսի աշակերտներուն, այլ ամէն դարու մէջ ապրող քրիստոնէաներուն ներշնչած է, եւ կը շարունակէ ներշնչել յաւիտենական կեանքի անմեռ եւ անմար յոյսը, թէ՛ կեանքը աստեանական չէ միայն, այլ նաեւ անդենական: Կա՛յ նաեւ անդրշիրիմեան կեանք մը, յաւիտենական կեանք մը:

Աւելին, Ս. Յարութեան հրաշքը, ոչ միայն Յիսուսի աշակերտներուն, այլ ամէն դարու մէջ ապրող քրիստոնէաները ներշնչած է, եւ կը շարունակէ ներշնչել, ամենօրեայ յաղթական կեանք ապրելու վստահութիւնը: Յարուցեալ Քրիստոսի յաղթութիւնը կը դառնայ քրիստոնէաներուն կենսունակութեան աւելի, կ'ըլլայ հօր ու ժամօղիչը՝ անոնց կեանքերուն եւ կը մղէ զանոնք դիմագրաւելու ամէն տեսակ տագնապներ, դժուարութիւններ եւ խռթիւր: Անոնք, Առաքեալին նման, իրեն հոգեկան ոգորումներուն մէջ կրնան յայտարարել. «Բայց գոհութիւն Աստուծոյ, որ մեզի յաղթութիւն կու տայ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով»:

Թող Ս. Յարութեան հրաշքը իր ներգործողութիւնը ունենայ ամէն մարդու կեանքին, որպէս զի կարենայ լիաթոք գոչել. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց. Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:

Վեր. Դոկտ. Վահան Յ. Թուփկեան
Գործադիր Տնօրէն,
Հայ Աւետարանական
Համաշխարհային խորհուրդի

ղին ու հայոց քրիստոնէական հաւատքին ի խնդիր:
Քրիստոսի Յարութեան խորհուրդով ներշնչուած՝ Յարութեան ճանապարհին է մեր ազգը:
Քրիստոս Յարեաւ ի Մեռելոց:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՍԻՒԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈՒԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Յարուցեալ Փրկիչի պարգեւած կեանքը կ'ապրինք նաեւ որպէս հաւաքականութիւն՝ որպէս Եկեղեցի, Հայրենիք եւ Սփիւռք: Ասկէ երեք տարի առաջ, 2016ի Ապրի-

Մասաչուսեթս Նահանգի Քաղաքներուն Սեշ Տեղադրուած Են Հայոց Ցեղասպանութիւնն Իրագելող Վահանակներ



«Արուեստի խաղաղութիւնը» կ'ազմակերպուի ընդհանուր (www.peaceofart.org) իր ամենամեայ գործունէութեան ծիրէն ներս Հայոց ցեղասպանութեան 104-րդ տարելիցին ընդառաջ ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգի տարբեր քաղաքներու մէջ, գլխաւոր մայրուղիներու վրայ Մարտ-Ապրիլ ամիսներուն ընթացքին բարձրացուցած է 5 ելեկտրոնային վահանակներ՝ յարգելով բոլոր ցեղասպանութիւններու անմեղ զոհերու յիշատակը, յիշեցնելով միջազգային հանրութեան 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնը՝ Հայոց Մեծ եղեռնի ողջ իրողութիւնը՝ որպէս անհրաժեշտ պատմական փաստ՝ «Երբեք չի մոռցուի» կարգախօսով:

Ինչպէս «Հայերն այսօր»-ին կը յայտնէ Հեղինէ Գէորգեան, այս տարուան վահանակը կը ներկայանայ հայ պատանիի դէմքով, որուն մէջ մասը խաւար է ու մռայլ, ինչպէս 1915-ի վերաբերեալ Հայաստանը՝ խոցուած Օսմանեան կայսրութեան կողմէ, իսկ միւս կողմը լուսաւոր՝ 2019-ի ծաղկուն ու պայծառ Հայաստանի նման:

«Վահանակի վրայի պատանին, որ 1915-ին որբացաւ, ենթարկուեցաւ ցեղասպանութեան կտտանքներուն նոյն պատանին է, որ բնօրրանէն արմատախիլ ըլլալով՝ թափառեցաւ աշխարհով մէկ, նոյն պատանին է, որ ծնաւ օտար հողի վրայ, նոյն պատանին է, որ ազատագրեց Արցախը եւ նոյն պատանին է, որ 2019-ին հպարտ կ'ապրի ազատ անկախ Հայաստանի մէջ: Ամէն հայու հոգիին մէջ, ըլլայ

հայրենիքին մէջ, թէ հայրենիքէն դուրս, ապրած է, կ'ապրի եւ պիտի ապրի նոյն պատանին, որ երբեք չի մոռնար եւ երբեք չի հրաժարի՝ պահանջելով դատապարտում եւ հատուցում անպատիժ եղեռնագործութեան համար», - իր խօսքին մէջ կը նշէ արուեստագետ, «Արուեստի խաղաղութիւնը» կազմակերպութեան նախագահ Դանիէլ Վարուժան Հեծինեան:

Ինչպէս նախորդ 23 տարիներուն ընթացքին, այս տարի նոյնպէս վահանակներու տեղադրումը կը հովանաւորուի «Արուեստի խաղաղութիւնը» կազմակերպութեան կողմէ, որ անշահոյժ կրթական, մարդասիրական կազմակերպութիւն է՝ ձօնուած աշխարհի խաղաղութեան պահպաններուն եւ իրագործողներուն, նաեւ անոնց, որոնք ունեցած են քաջութիւն իրենց կեանքը վտանգելու մարդկութեան բարօրութեան համար:

«Արուեստի խաղաղութիւնը» կազմակերպութիւնը կ'օգտագործէ արուեստի համընդհանուր լեզուն՝ իրագրեկելով մարդկային գոյավիճակի մասին, նպաստելով հակամարտութիւններու խաղաղ լուծման: Այն կը ծառայեցնէ արուեստը յանուն խաղաղութեան եւ չունի որեւէ քաղաքական կամ կրօնական ուղղութիւն՝ առանցք ունենալով Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումը եւ Հայաստանի հեղինակութեան բարձրացումն արտերկրի մէջ:

Այս տարի ելեկտրոնային վահանակները կը ցուցադրուին մինչեւ 2019 թ. Ապրիլ 30-ը:

Իրաւաբան Ռուբէն Աւարեանի Երկհատոր Գիրքի Շնորհանդէսը «Լիբանանի Խորհրդարանի Հայ Երեսփոխանները»



Անցեալ Հինգշաբթի Ապրիլ 11, 2019 Կլենտէյլի Կեդրոնական գրադարանի հանդիսարանին մէջ, տեղի ունեցաւ ծանօթ իրաւաբան Ռուբէն Աւարեանի լոյս ընծայած վերոյիշեալ գիրքի շնորհանդէսը: Գալիֆորնիոյ Նորթրիճ համալսարանի հաշգիտական ամպլոնի եւ Հայկազեան Համալսարանի Սանոց Միութեան կողմէ նախաձեռնուած սոյն միջոցառումին ներկայ էին Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Լոս Անճելոսի Լիբանանի հիւպատոս Տիկ. Միրնա Խաւուրի, ինչպէս նաեւ Նոր սերունդ Մշակութային Միութեան, Ս.Գ.Հ.Վ. Վարիչ Մարմնի, այլ կազմակերպութեանց եւ մամուլի ներկայացուցիչներ:

Իրաւաբան Ռուբէն Աւարեանի «On The Record Armenia Deputies in the Lebanese Parliaments» խորագրով երկհատոր գիրքի մասին հանգամանաւոր կերպով եւ ողջոյնի խօսքերով արտայայտուեցան օրուան հովանաւոր Լիբանանի հիւպատոսուհի Տիկ. Միրնա Խաւուրի, Փրոֆ. Վահրամ Շամմասեան (CSUN համալսարանի հաշգիտական ամպլոնի վարիչ) եւ Տիկ. Յասմիկ Պարան (Հայկազեան Համալսարանի Սանոց Միութեան ատենապետուհի): Անոնք բարձր գնահատեցին Ռուբէն Աւարեանի սոյն ծաւալուն աշխատասիրութիւնը, որուն մէջ յստակ պատկերացում մը կու տայ լիբանանեան Խորհրդարանի աւելի քան 80 տարիներու հայ երեսփոխաններու գործունէութեան մասին:

Օրուան գլխաւոր բանախօսն էր գիրքին հեղինակը Ռուբէն Աւարեան: Ան լուսապատկերներու ընկերակցութեամբ նախ հակիրճ պատմական ըրաւ Ա. Համաշխարհային պատերազմին յաջորդող Լիբանանի քաղաքական իրավիճակի եւ ապա 1943ի անկախութենէն ետք երկրի խորհրդարանական կեանքի եւ հայ համայնքի ներկայացուցիչ երեսփոխաններու մասին:

Արդարեւ, սոյն շահեկան եւ ընդարձակ աշխատասիրութիւնը լոյս տեսած է զոյգ հատորներով: Առաջինը կ'ընդգրկէ 1922-1972, իսկ երկրորդ հատորը՝ 1972-2017 ժամանակաշրջանները: Պատմական լուսանկարներու միջոցով, յարգելի զեկուցաբերը նշեց հայ երեք շարանուանութիւններու (առաքելական, կաթողիկէ եւ աւետարանական) երեսփոխաններու ժամանակագրութիւններն ու գործունէութիւնները: Այդ ընտրութեանց մէջ շատ կարեւոր դերակատարութիւններ ստանձնած էին հայ քաղաքական կուսակցութիւնները, որոնք նաեւ ունեցած էին իրենց ներկայացուցիչները: Այդ մասին հաւանաբար հեղինակը կ'անդրադառնայ իր աշխատասիրութեան երկրորդ հրատարակութիւնէն պարագային:

Աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ երկհատորեակի մակագրութիւն հեղինակին կողմէ: Գնահատելի նախաձեռնութիւն մը:

Նորանոր յաջողութիւններու մաղթանքներով:

Բարեխօսական Կարգ՝ Նուիրուած Սրբոց Նահատակաց

Տեղեկացնում ենք մեր հաւատաւոր ժողովրդին, որ Չորեքշաբթի, Ապրիլ 24-ին, երեկոյեան ժամը 6:00-ին Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարում (Պըրպէնք) տեղի պիտի ունենայ Սրբոց Նահատակաց Բարեխօսական կարգ:

Մեծ եղեռնից 100 տարի անց՝ 2015 թվականի ապրիլի 23-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուց Եպիսկոպոսաց դասի որոշմամբ Ն.Ս.Օ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն հայոց կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Առաջինի կողմից սրբադասուեցին Հայոց Ցեղասպանութեանը զոհ զնացած բոլոր նահատակները՝ աւելի քան մէկուկէս միլիոն մարդ:

Բարեխօսական կարգը կ'անցկացուի հանդիսապետութեամբ Բարձր. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, Արժի. Միքայէլ Եպս. Մուրատեանի, Վեր. Պերճ Ճամպազեանի:

Սիրով հրաւիրում ենք հաւատաւոր մեր ժողովուրդը՝ միասնաբար մասնակցելու աղօթքի եւ ուխտի այդ վերանորոգման:

Հայ ԅարանուանութեանց Առաջնորդների Խորհուրդ

ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԲԱՐԵՒՅՍԱԿԱՆ ԿԱՐԳ

Հանդիսապետութեամբ
Բարձր. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի
Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի
Արժի. Միքայէլ Եպս. Մուրատեանի
Վեր. Պերճ Ճամպազեանի

Սիրով կը հրաւիրեց հաւատաւոր մեր ժողովուրդը միասնական աղօթքի եւ ուխտի վերանորոգման:

Չորեքշաբթի, 24 Ապրիլ 2019
Երեկոյեան 6:00 - ին
Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճար

Տաղթ - 3325 N Glendale Blvd, Burbank CA, 91504
Տել - 818-558-7474

Կեդրոնական Բարձրագոյն Վարժարանը՝ Մեր Երկրորդ Տունը



Երկրորդ տունը՝ դպրոցը: Ճշմարիտ խօսք է: Դպրոցէն շրջանաւարտ կ'ըլլաս, կ'ամուսնանաս, զաւակներդ դպրոց կ'ուղարկես եւ տակաւին սրտիդ մէջ քու յաճախած դպրոցդ կը մնայ երկրորդ տունդ, դասընկերներդ՝ եղբայրքոյրերդ:

Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարանի շրջանաւարտներուն համար ալ երկրորդ տուն կը համարուի իրենց սիրելի վարժարանը: Այս իրողութիւնը պատճառ դարձած է, որ քսանինն տարի առաջ Արեւմտեան Ամերիկայի այս փերուն, հիմնուի Շրջանաւարտից Միութիւն, որ պէսզի բարոյապէս եւ նիւթապէս թեւ ու թիկունք կանգնի նիւթական դժուար պայմաններուն մէջ գտնուող էշրէֆիէի Կ.Բ.Վ.-ի աշակերտներուն: Շրջանաւարտից Միութեան տարեկան օժանդակութիւնները ուժ ու կորով կը ներշնչեն տնօրէնութեան, հոգաբարձութեան, ուսուցչակազմին եւ աշակերտներուն, որպէսզի բծախնդիր եւ գերազանց աշխատանք տանին, դառնալով Լիբանանի հայկական առաջնակարգ վարժարանը բոլոր մարզերուն մէջ:

Հուրի Դաւիթեան, Պատուելի ձօ եւ երէցկին Լենա Կարապետեան, Վերապատուելի Յովսէփ եւ երէցկին Սուզի Մաթոսեան, Վերապատուելի Գէորգ եւ երէցկին Ալիա Տէրեան, Վերապատուելի Սերոբ եւ երէցկին Ալինա Մկրտիչեան, տէր եւ տիկին Արամ եւ Անայիս Պուրղուճեան:

Ճաշկերոյթին բացումը կատարուեցաւ յոտնկայս ունկնդրելով երկու քայլերգներ: Առաջինը՝ ԱՄՆահանգներու քայլերգը՝ Արա Գուրույանի մեկնաբանութեամբ, իսկ Հայաստանի օրհներգը՝ տեսերիզով՝ ԿԲՎ-ի աշակերտներու երգչախումբին մեկնաբանութեամբ: Ապա՝ Պատուելի ձօ Կարապետեան կատարեց օրհնութեան աղօթքը, Աստուծոյ ինդրելով կորով ու առողջութիւն բոլոր նուիրատուներուն եւ վարժարանին նեցուկ կանգնողներուն, ինչպէս նաեւ բարձր նուիրում ԿԲՎ-ի բոլոր կրթական մշակներուն, տնօրէնութեան եւ հոգաբարձութեան անդամներուն:

«Մեր գործունէութեամբ, ժամանակով եւ նիւթական օժանդակութեամբ կը փաստենք, որ «Մենք հոգատար ենք ԿԲՎ-ին», ինչպէս կ'ըսէ մեր կարգախօսը» սողերով



Շրջանաւարտից Միութեան կազմակերպած քսանիններորդ ճաշկերոյթ-հաւաքը տեղի ունեցաւ 8 Մարտ 2019-ի երեկոյեան ժամը 7:00-ին, Կլենտէյլի "Glenoaks Ballroom" մէջ, «Մենք հոգատար ենք ԿԲՎ-ին» կարգախօսին հաւատալով:

Ձենդ, անամօթ..., Աստուց գիտենայ, թէ ինչքան իմ սիրել մօրս..., ներիր Տէր Աստուած, ես մեղայ՛, ես մեղայ՛..., ասաց Ջիմգիմովը եւ ձեռքերն ու գլուխը վեր պարզած՝ խաչակնքեց ու իջաւ մեքենայից:

Յաջորդ օրը երեկոյեան, ծանօթ վարորդը եկաւ եւ մեր հերոսներին տարաւ Խաբեբաների Միութեան կազմակերպած՝ Մայրերի օրուան նուիրուած ձեռնարկին:

Բարով էք եկել սիրելի հիւրեր, ընդառաջ գալով մեր թիֆլիսեցիներին, ասաց կարճահասակ, գիրուկ, պարարտ փորով, նոյնքան պարարտ հետոյքով, հարուստ բոխախով (չաղիկ ենթակզակ), խափշիկ յիշեցնող մի կին: Երեւի դուք մեր միութեան Ապրիլ Մէկեան յայտարարութեան անդամներից էք, այո՞..., շարունակեց կինը:

Չէ՛, չէ, քուր ջան, իսնք հեռու տեղէն կու գան, խօսքի մէջ մտաւ մեր հերոսների վարորդ, քոքով, պորտով լենինականցի Լենդրուշը, էկել են, որ քիչըմ բան սովորին ձեզնից: Ծանօթացիր քուր ջան, էս մէկը Չամբախովն ա, էն մէկե՛ն էլ՝ Ջիմգիմովը:

Սխալ օր էք եկել յարգելի պարօններ, այսօր հանդիսաւոր օր է, նշում ենք Մայրերի տօնը, խորհրդակցութեան եւ փորձի փոխանակման համար եկէք վաղը, այժմ գնանք ներս: Ես ձեզ կը տեղաւորեմ, ասաց կինը:

Ո՞ւր գանք քուր ջան, դարձեալ Լենդրուշն էր միջամտողը, էս քոսոտ տե՞ղը..., հլա մէ անունդ ըսայ քուրս...

Անունս Դիանա է..., մէկմէկ էլ Դիանա են կոչում..., բայց դուք ինչո՞ւ էք վիրաւորում մեզ՝ «Քոսոտ տեղ» անուններով այս միջանցքը:

Դիանա ջան, քուրս, լաւ է, որ դուն էլ ըսիր միջանցք..., ինչո՞ւ էլ սիրո՞ւն անուն ունիս..., ըսայ խնդրեմ, բա մեր մայրերը սրան են արժանի՞..., ինչ է, դու մեր չունի՞ս...

Խի՞ չունիմ, մեր էլ ունիմ, հեր էլ ունիմ, լենինականցու բարբառով փորձեց պատասխանել Դիանան:

Բա դ՞ու, դու մեր չե՞ս, հարցրեց մինչ այդ պահը դէպքերին հետեւող Ջիմգիմովը:

Այստեղ մի պահ Դիանան փորձեց խուսափել պատասխան տալուց, բայց որսալով Լենդրուշի՝ իրեն ուղղուած սեւեռուն հայեացքը՝ ստիպուած եղաւ պատասխանել թիֆլիսեցի մեծահարուստի հարցին:

Մայր եմ, այո՞..., ամուսին, երեխաներ եւ թոռներ էլ ունեմ՝ Հայաստանի գիւղերից մէկում: Տասնըհինգ տարի է այստեղ եմ ապրում, առայժմ անօրէն կարգավիճակով..., բաւարարուած էք պարօնայք, խայթող հայեացք ուղղելով շուրջիններին՝ ասաց սեւագգեստ տիկինը:

Հանդիսաւոր լուծութիւն: Չամբախովը Ջիմգիմովի ականջի մէջ. «Ես էլ ասում իմ, թէ էս աթարի հոտը ո՞ւրդուց ա գալի..., ըսենց մեր կուլի՛ ախպեր..., ինքը ըստեղ, ընտանիքը՝ Հայաստան..., հէ՛յ, աշխարհ, աշխարհ»:

Մի կերպ ինքնիրեն հաւաքելով Դիանան ասաց.

Օրը Կիրակի է, մեզ ոչ ոք չի խանգարում, գնացողեկող չկայ, ամբողջ շէնքում միայն մենք ենք:

Մեր Պատուախնդիր Չեմպիոնը եւ Քուպայի Չամեղ Ջուրը

Առաջին կարճ բայց խորքային «չփումը», որ ունեցայ Հրանտի հետ, 2016 Ապրիլեան քառօրեայի բախտորոշ օրերն էին որ «Ատրպէյճան» կոչուած պետութեան գորքերը լայնամաշտաբ, յարձակում իրականացրին Արցախի եւ Հայաստանի երկայնքով: Աւելորդ չեմ համարում հիացմունքով յիշել Սփիւռքը եւ Հայրենիքը ինչպիսի մոնոլիտ համակցութիւն էին դրսեւելել:

Լոս Անճելոսում նոյնպէս այդ եռուգեռն էր, մանաւանդ երիտասարդների շարժումը, կարծես կամաւորական իւրատեսակ շարժում սկսած ինչէր հայրենիքը պաշտպանելու համար:

Երբեմնի ծանրամարտի աշխարհի ախոյեան Հրանտը երիտասարդ չէր, 67-ի մօտակայքում էր, երբ իր հետ իմ խորքային կոնտակտը ունեցայ, որից յետոյ էլ աւելի խորացաւ մեր յարաբերութիւնները: Ծխում էր, երբ ողջունելով մօտեցայ, իրեն յատուկ ժպիտով եւ տոնայնութեամբ, ինձ ասեց «Ես էլ պիտի գնամ, ինչ ունեմ կորցնելու», հարցրի ո՞ւր Հրանտ, «Հայաստան կուուելու», պատասխանեց:

Ես զարմացած եւ մի քիչ էլ հիացած հայեացքով նայեցի նրա դէմքին, կարծես զգաց, որ փորձում եմ ստուգել նրա արտայայտութեան լրջութիւնը եւ անկեղծութիւնը: Նա առանց խօսքի կարգաց նաեւ իմ այն հարցումը, որը ամէնքի մօտ բնականաբար կ'առաջանար, «այս տարիքիս ու այս հալիդ ախր ո՞ւր ես գնում այ Հրանտ, չե՞ս կարծում աւելորդ բեռ ես լինելու»:

Նա շատ արագ կարգաց հարցա, եւ ինքնասիրութիւնը վիրաւորուած մարդու կեցուածքով ասաց: Ինչ է՞, չեմ կարող գէնք լիցքաւորել, եւ հասցնել զինուորներին»: Ակամայից յուզուեցի եւ գրկելով իրեն ասացի «Չէ՛ Հրանտ ջան, ով կարող է համարձակուել, կասկածի տակ դնել քո նուիրուածութիւնը Հայրենիքին»:

Սակայն այս յուշագրիս բուն առիթը մի այլ կարեւոր նիւթ էր, նիւթ որը կ'ուզեմայի պատշաճը հատուցելու համար, անհրաժեշտ կարողութիւնը ունենայի, նիւթ, որը ոչ միայն սպորտային ժուռնալիստիկայի ժանրից է, այլ պատուախնդիր հայրենասէրի, յորդորն է անձնական օրինակով, բոլորիս, անխտիր եւ բոլոր ժամանակների համար:

1972 թուականին Յուլիան էր, Քուպայի մայրաքաղաք Հաւանայում աշխարհի առաջնութիւնն էր, Հրանտը Հայաստանի թիմն է ներկայացնում, սակայն խորհրդային միութեան դրօշի ներքոյ: Ժամանակները ուրիշ էին, կեանքը այդքան քաղաքականացուած չէր, ինչպէս այս օրերին, ամէն մէկը աշխատում էր իր գործով:

Սակայն մեր Հրանտի մօտ միայն գործը չէր շարժիչ ուժը, այլեւ պատուախնդրութիւնը, բացի այդ քրտնաջան պարապմունքների արդիւնքում, նրա ողջ վարքագծի եւ շարժումների մէջ միայն ախոյեանի տիտղոսն էր ակնկալուում, ուրիշ մրցանակ չէր պատկերացնում: Թիմի բոլոր մասնակիցները նոյնպէս այդ համոզմունքին էին, որ Հրանտը ծանրամարտի 57-60 կգ քաշային կարգում վստահ չաղթելու է եւ դառնալու է ախոյեան:

Ես:

Աւաղ մրցումների ամենապատասխանատու օրը, որ ժամը 4ին պէտք է սկսեր եւ նոր ռեկորդներ սահմաներ, չարաբաստիկ անպատեհութիւնը թակեց մեր «չամպիոնի» դուռը: Ըստ եղած տեղեկութիւնների, որ այդ տարիների սպորտային լրատուամիջոցներում գետեղուած էր, Մրցոյթի օրուայ առաւօտը ժամը 8ին, կշռուելու ժամանակ բացառապատու եւ արձանագրուած է, որ Հրանտի քաշը 7 կգ-ով գերազանցում էր նորմատիւրը: Դա նշանակում է խաղից դուրս մնալ, որը Հրանտի համար նշանակում էր պարտութիւն, իսկ դա պատուի խնդիր էր: Աշխարհասփիւռ հայութեան սպորտի սիրահարները անհամբեր սպասում էին նրա նոր ռեկորդների: Այդ մասին արխիւային հրատարակուած նիւթերին ծանօթանալիս, չհամբերելով նիւթերն աւարտին հասցնել կատակով հարցրի «Այ Հրանտ ջան դու քո քաշի մասին մոռացել էիր, թէ՞ տեղի խորովածասէր հայերի ձեռքն էիր ընկել»:

Մանկան պէս արդարանալով բացատրեց, թէ «չես պատկերացնում Քուպայում որքան համով էր խմելու ջուրը, որ ասեմ Հայաստանի ջրից աւելի համով էր հաւատայ»: Եղածը եղած էր:

Մինչեւ հայրենադարձուելը իրանի դրօշի ներքոյ այնուհետ Խորհրդային Հայաստանի, եւ միութեան դրօշների ներքոյ բազմիցս յաղթանակած մեր «չեմպիոնը» կանգնած էր փաստի առաջ: Քուպայի համեղ ջուրը իր «սեւ գործը» արել էր:

Յանկարծ աներեւակայելի յանդուգն օրոշում է կայացնում, մինչեւ ժամը 4ը պէտք է 7 կգ քաշ պակասեցնի: Իրենց թիմի մեքենայի Քուպայի վարորդին խնդրում է, մեքենան պահել արեւի տակ, պատուհանները փակել եւ միացնել վառարանը: Միաժամանակ իր հաւաքականի մասնակից ընկերներից ի պահ է վերցնում նրանց սպորտային շապիկները փոքրից սկսած մինչեւ մեծ չափերով: Շապիկները հագնում եւ մի քանի միզամուղներ ընդունելուց յետոյ իջնում է, նստում վառարանը միացուած մեքենայի մէջ: Քուպայի անցորդները, զարմացած նայում են տարօրինակ երեւոյթին եւ ձեռքի շարժումներով խելագար համարելով անցնում էին նրա կողքից:

Որքան է տեւում այս տարօրինակ քրտնելու գործողութիւնը չի յիշում, Միայն յիշում է, որ ապականների տարափի տակ իրեն արթնացնում են: Աչքերը բացում եւ տեսնում է բժիշկներով ու բուժքոյրերով շրջապատուած է:

Դեռ մրցապայքարի իր քաշի հերթը չէր հասել: Արագութեամբ լողանում, թեթեւանում է եւ պատրաստուած է ծանր երկաթների հետ կռիւ տալու:

Կչեռքի սենեակում առաւօտուայ նոյն կշռոյն էր, նոյն տեղում: Նա զարմանքով նայում էր մէկ սլաքին մէկ Հրանտին եւ մէկ էլ առաւօտուայ գրառումներին: Ինչեւիցէ, քաշի խնդիրը լուծուել էր: Հագիւլ-հագ բաց ընդունելի չնչին շեղումով Հրանտը իրաւունք է ստանում հարթակ բարձրանալ եւ պատուախնդիր հերոսի պէս յաղթարշաւը շարունակել:

Յիսնամեակ Վիեննայի Հայ Գաղութը Ամենայն Հայոց Տ.Տ. Վազգէն Ա Կաթողիկոսի Այցն ու Նորաշէն Եկեղեցւոյ Օծումը Ամեն. Շնորհք Պատրիարքի Մասնակցութիւնը

«Լոնտոնէն բարերարուհի Ռոզիսիմէ Հալաճեան Թրիքի 1962 թուին Մայր Աթոռ Ս. Էջմիածին կ'այցելէր ու Վազգէն Հայրապետին կը յայտնէր իր կտակի մասին, եւ Լոնտոն վերադարձին Մայր Աթոռին կը կտակէր իր ամբողջ նիւթակա կարողութիւնը»

ՍԵՍՐՈՊ Ծ. ՎՐԴ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՂՈԿՏ. ԶԱԻՆ Ա.
ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Հայ Գաղութը

Աւստրիոյ մայրաքաղաք Վիեննայի հայ գաղութի ներկայ բարգաւաճ վիճակը կը պարտինք Վիեննայի երկարամեայ հոգեւոր հովիւ եւ ապա Կեղրոնական Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ երջանկայիշատակ Մեսրոպ Արքեպիսկոպոս Գրիգորեանին: Սրբազանը վախճանեցաւ 2017 Յունուար ամսուն: Անցեալին Վիեննայի հայ գաղութը իր կազմաւորման շրջանին քաղաքամիջին շէնքի մը երկրորդ յարկին վրայ կառուցած էր Ս. Փրկիչ մատուռը երբ Աւստրիոյ մայրաքաղաքի հայեր իրենց պատմութիւնը կը կերտէին 18-րդ դարէն ի վեր, յատկապէս երբ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան մէկ մասը Վիեննա կը փոխադրուէր մշտական կայք հաստատելով 1811 թուականին:

1913 թուին Վիեննայի Հայ Առաքելական Եկեղեցւոյ համայնքը յաջողած էր վերոյիշել մատուռը կառուցանել Միհրան Կարապետեանի գլխավորութեամբ ու թ հոգինոց «Եկեղեցաշինութեան Միութիւն» խնամակալ մարմնի հակողութեան ներքեւ օծելով զայն յանուն Ս. Փրկչին: Առաջին հոգեւորականը եղած է Արիստակէս քահանայ Ֆէսլեան՝ Ռուսմանիայէն, եւ ապա Եղիշէ քահանայ Իւթիւճեան, նոյնպէս Ռուսմանիայէն, որ 35 երկար տարիներ ծառայած է Աւստրիոյ եւ Գերմանիոյ հայ համայնքներուն: Իւթիւճեան յետագային այրիանալով վեղար ու ծայրագոյն վարդապետի աստիճանները կը ստանար:

Այդ տարիներուն Վիեննայի հայութիւնը 300 անձ կը հաշուէր, երբ 1958 թուին Ամենայն Հայոց Հայրապետի Գահակալութեան եւ Մննդեան երրորդ եւ յիսամեայ տարեդարձներուն առիթով դէպի Ս. Էջմիածին մեր ճամբուն վրայ Վիեննա երկու օր մնացինք, Եգիպտահայոց Առաջնորդ Մամբրէ Արքեպոս. Սիրունեանը, պատմաբան Արշակ Ալպոյաճեանն ու ես, եւ առիթը ունեցանք այցելելու Մխիթարեանց



Վանքն ու հայոց Ս. Փրկիչ մատուռը: Հիւրասիրուեցանք Վիեննայի Մխիթարեանց Միաբանութեան կողմէ եւ Արշակ Ալպոյաճեան պատմաբանը հրճուանքն ունեցաւ ողջագրուելու յայտնի պատմաբան եւ բանասէր Հ. Ներսէս Վարդապետ Ակինեանին հետ որպէս գրչեղբայր:

Սեսրոպ Ծ. Վրդ. Գրիգորեան

Անթիլիասի Կիլիկեան Աթոռի դպրեվանքին ուսեալ հոգեւորականներէն Մեսրոպ Ծ. Վարդապետ Գրիգորեան Ամենայն Հայոց Հայրապետի հրաւէրով հոգեւոր հովիւ կարգուեցաւ Վիեննայի հայոց եւ գործի լծուեցաւ նորաշէն կալուածի մը գնումին եւ նոր եկեղեցւոյ կառուցման կարեւոր աշխատանքներուն 1962-1963 թուականներուն: 1962-ին նոր ժամանած երիտասարդ Մեսրոպ Ծ. Վարդապետ Գրիգորեանի առաջնորդութեամբ կալուած մը գնելու մասնաւոր աշխատանք տարուեցաւ, եւ յաջորդ տարուան Դեկտեմբերի եկեղեցական վարչութեան ժողովին նուիրատուներ գործի լծուեցան: Որոշուեցաւ ընդարձակ բակով կալուած մը գնելու շուտով պիտի կառուցուէր Աւստրիոյ առաջին հայ եկեղեցւոյ շէնքը:

Եկեղեցւոյ հիմնարկէքը Մեսրոպ Ծ. Վարդապետ ինք կատարեց 1964 թուին Յունիս 28-ին, ճարտարապետութեամբ հայրենի ճարտարապետ Եղուարդ Սարաֆեանի եւ բարերարութեամբ Լոնտոնէն Հռիփսիմէ Հալաճեան թրիքի որուն նուիրատուութեամբ կարելի եղած է իրագործել զայն: Բարերարուհին երբ 1962-ին Մայր

Աթոռ Ս. Էջմիածին կ'այցելէր, Ամենայն Հայոց Տ.Տ. Վազգէն Ա Հայրապետին կը յայտնէր իր կտակի մասին, եւ Լոնտոն վերադարձին Մայր Աթոռին կը կտակէր «իր ամբողջ նիւթակա կարողութիւնը», իր փափաքն ալ յայտնելով Վիեննայի հայ եկեղեցւոյ շինութեան բարերարը դառնալու: Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ կ'իրագործուէր իր կտակը ու Ս. Հռիփսիմէ եկեղեցին կը կառուցուէր:

Ամենայն Հայոց Հայրապետի Այցելութիւնը

Յիսուն տարիներ առաջ Տ.Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը կը հրաւիրուէր Մեսրոպ Ծ. Վարդապետի եւ Վիեննայի հայ համայնքի խնամակալ Մարմնին կողմէ Հայրապետական եկեղեցւոյ օծումը: Հայրապետը Վիեննա կը ժամանէր 1968 թուին Ապրիլի 20-ին իր շքախումբի անդամներուն Ս. Կոմիտաս Արքեպիսկոպոսի, Տ. Ներսէս Ծ. Վարդապետի, գաւազանակիր Հայր Սուրբին եւ Արթուր Հատիտեանի հետ: Վիեննայի օդակայանը ժամանած էին Հայրապետին դիմաւորելու Կ. Պոլսոյ Ամենապատիւ Շնորհք Պատրիարք Գալուստեան, Աւստրիոյ Կաթողիկ եկեղեցւոյ Կարտինալ Ֆրանց Գիոնիզը, քաղաքապետն ու Օրթոթոքս Եկեղեցւոյ մետրապոլիտը: Եկեղեցւոյ հանդիսաւոր օծումը կատարած է Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ապրիլի 21-ին ու եկեղեցին հաստատած յանուն Սուրբ Հռիփսիմէի եւ ի յիշատակ բարերարուհի տիկնոջ: Հայրապետը անդրանիկ Սուրբ Պատարագը մատուցած է ի ներկայութեան Կ. Պոլսոյ Հայոց Շնորհք Պատրիարք Գալուստեանի եւ բարձրաստիճան եկեղեցական ու քաղաքական պետական անձանց:

Հայրապետը կուտար իր պատգամը ողջունելով Վիեննայի հայութիւնը եւ շեշտելով որ «իսկական գործը ստեղծել եւ անցնելն է հոգեւոր կառուցը իրենց հաւաքական եւ համայնական կեանքին, որ է բուն եկեղեցին»: Եկեղեցին թէեւ փոքր եւ սակայն կրնայ բաւարարել 160 հոգի, մուտքին զանգակատան ներքեւ Սուրբ Հռիփսիմէ Կոյսին մեծադիր խճանկարով: Տարիներ առաջ առիթը ունեցաւ Վիեննա այցելելու Մեսրոպ Ծ. Վարդապետին,

Անթիլիասի իմ երէց դասակիցին, եւ ահանատեսի վկայութիւնս է որ կը բերեմ նորաշէն եւ գողտրիկ այդ եկեղեցին:

Ճաշկերոյթ ի Պատիւ Հայրապետին

Համագաղութային ճաշկերոյթը ի պատիւ Ամենայն Հայոց Հայրապետ Տ.Տ. Վազգէն Կաթողիկոսին տեղի կ'ունենար նոյն երեկոյեան ու յայտագիրը կը վարէր Հոգեւոր հովիւ Տ. Մեսրոպ Ծ. Վարդապետ: Նախ խօսք կ'առնէր Ամենապատիւ Շնորհք Պատրիարք յանուն իր Աթոռին եւ թրքահայութեան, յայտնելով իր ուրախութիւնը նորած եկեղեցւոյ առիթով ու եկեղեցին նուիրելով Ատափա-գարի Ս. Մինաս եկեղեցւոյ արծաթապատ «Իւղաբերից Աւետարան» եւ զոյգ մը արծաթեայ աշտանակներ: Վեհափառ Հայրապետը գնահատելով եկեղեցւոյ վարչութեան անխնայ նախագահ Սարգիս Կարապետեանի աշխատանքը, Ս. Գրիգոր Լուսաւորչի Ա Կարգի շքանշանով կը պատուէր զինք, եւ վարդապետական ակադեմիա լուս լանջախաչ կը շնորհէր Մեսրոպ Ծ. Վարդապետ Գրիգորեանին:

Սեկնում դէպի Միացեալ Նահանգներ

Ամենայն Հայոց Հայրապետը Վիեննայէն Նիւ Եորք պիտի մեկնէր Հայրապետական այցելութեամբ այս անգամ օժելու Արեւելեան Թեմի նորակառուց Ս. Վարդան Մայր Տաճարը: Մեկնումէն առաջ Աւստրիոյ Ֆրանց Գիոնիզ Կարտինալը իր ապարանքին մէջ յատուկ ընդունելութիւն կը սարքէր ի պատիւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին որուն ներկայ կ'ըլլար նաեւ Շնորհք Պատրիարք եւ Մխիթարեան Միաբանութեան Աբբասայր Մեսրոպ Արքեպիսկոպոս Հապոգեան: Ապրիլ 23-ին Շնորհք Պատրիարք հրաժեշտ կ'առնէր Վեհափառ Հայրապետէն ու ժրնեւ կը մեկնէր, իսկ յաջորդ օր նորած եկեղեցւոյ մէջ Ապրիլեան Եղեռնի յիշատակին Ս. Պատարագ կը մատուցանէր Տ. Ներսէս Ծ. Վարդապետ Պոգապալեան: Երեկոյեան Ապրիլեան յիշատակի հանդիսութիւն տեղի կ'ունենար Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ, եւ Ապրիլ 25-ին Հայրապետը իր շքախումբով կը մեկնէր Միացեալ Նահանգներ հոն եւս օժելու համար նորակառուց Մայր Տաճարը:



MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served your health and life insurance needs.

We will continue to stand by your side and secure your **family** and **business** with our full range of insurance policies.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE

(818) 500 9585

805 E. Broadway, Glendale, CA 91205
sbmaronian@gmail.com
CA INSURANCE LICENSE # 0C99815


MaronianInsurance.com



HEALTH



LIFE



COMMERCIAL

ԱՆԴՐԱԴԱՐՁ

«Դեմ առ Դեմ Անցեալիս Դետ» Ժանեթ Գիրեջեանի Երկխօսութիւնը Ժամանակին Դետ

ՅՈՎՍԷՓ ՄԵԼՔՈՆԵԱՆ


Գիրքը հասարակութեան մը կենդանի շունչն է ու կը հանդիսանայ տուեալ ժամանակաշրջանի մը հայելին: Անոր մէջ կ'ապրին այդ շրջանի մտահոգութիւնները, երազները, իդէալները եւ մտքի փայլատակունքները: Մէկ խօսքով գիրքը միջավայրի եւ միջոցառումի հետ կապ ունի: Երբ հեղինակ մը այդ միջավայրը կը հարստացնէ իր աշխոյժ մտաւորական լիցքով, որակաւորները դրամով եւ ընդհանուրին մակարդակը բարձրացնելու սահմանուած բովանդակութեամբ, գիրքը եւ գրականութիւնը կ'ապրին ու անոնց հանդէպ եղող սիրոյ եւ կապուածութեան մշակոյթը կը փոխանցուի յաջորդ սերունդին: Այլապէս, ինչպէս կրնանք անցեալը ըմբռնել, մեր մշակոյթի դարաւոր գարեգացումին հաղորդակից ըլլալ ու նաեւ պահպանել հայ մշակոյթի էութեան եւ հայ ժողովուրդի պատմութեան հաղորդակցականութիւնը մէկ դարաշրջանէ այլ դարաշրջան՝ եթէ գիրքը բացակայ է մեր կեանքէն:

Այսպիսի խորհրդածութիւններէ անցայ կարգալով թորոնթոհայ գրող Ժանեթ Գիրեջեանի նորագոյն հեղինակութիւնը հանդիսացող յիսունէ աւելի գողտրիկ գրութիւններ պարփակող հատորը:

Այս հատորը առաջին իսկ վայրկեանէն իր գրաւիչ կողքի նկարով եւ ձեւաւորումով իր բովանդակութեան բոլոր կը հաղորդէ ընթերցողին: Իսկ նիւթերը իրենց բազմազանութեամբ եւ խորքով սփիւռքահայ իւրաքանչիւր հայու տագնապին ու մտահոգութիւններուն, ինչպէս նաեւ մտաւորական եւ ազգային արժեւորումներու հայելին կը հանդիսանան: Արդարեւ, նիւթերը իրենց ընտրութեամբ եւ խորքով սփիւռքահայ պայքարի էութիւնը անգամ մը եւս մեր մտապատկերին առջեւ կը պարզեն, հարցերը կը յուշեն, կը բացատրեն եւ կը պարզաբանեն, միաժամանակ այդ հարցերուն հայտնի հայ մօր մը, հայ կնոջ մը եւ հայ մանկավարժի մը խօսքը գունաւոր պատարան վրայ բարձրացնելով: Մէկ խօսքով այդ գրութիւնները առանց բացառութեան իւրաքանչիւր քայլին մեր հասարակական ըմբռնումներու եւ արժէքներուն շերտ հաւատացող եւ հաւատացեալ շեփորահար անձի մը պատգամը կը փոխանցեն ընթերցողին:

Գիրքը կարգացի բաժնելով գայն երեք կարեւոր եւ գլխաւոր բաժիններու: Առաջին մասը ընկերային խորք ունեցող հարցերն էին: Երկրորդ մասը ազգային բովանդակութեամբ իսկ երրորդ մասը փիլիսոփայական խորհրդածութիւններով յատկանշուած գրութիւններ կը պարփակէին: Երեքի պարագային սակայն գեղեցիկ եւ կուռ լեզուն, պատկերաւոր ոճը եւ արտայայտութեան դիպուկ գրելաձեւը մէկ համայնական յայտարարով եւ ոգիով իրարու կը կապէին այդ երեք բաղկացուցիչ մասերը:

Գրութիւններու բազմազանութեան նաեւ ընթերցողը պատկեր մը կը կազմէ հեղինակի մտաւորական հետաքրքրութիւններու, ուղղութեան, աշխատանքներու եւ ջանքերու էութեան մասին: Քիչ է թիւը այն անձերուն որոնք մեր



հասարակական կեանքի բեմը կը բարձրանան ու իրենց ելոյթներով իրենց հարուստ ներաշխարհի, փորձառութեան եւ արհեստագիտական որակաւորումին համապատասխանող եւ մակարդակին վայել ԲԱՆ մը կ'ըսեն բեմէն եւ պատճառ կ'ըլլան ունկնդիրի մօտ անդրադարձ մը ստեղծելու իրենց ելոյթով: Բախտաւոր են անոնք որոնք այսպէս անձեր լսելու հաճոյքն ու առիթը կ'ունենան: Տիկին Գիրեջեան կը պատկանի այն անձերուն որոնց խօսքը եւ միտքը աներկբայ կերպով իրենց թիրախին կը հասնին:

Սփիւռքի պայմաններուն մէջ հայ գիրքի եւ մշակոյթի սակաւաթիւ սպասարկուներ կը գործեն տակաւին: Սակաւաթիւ են նաեւ այդ մարզէն ներս գործող հայ կիները որոնց խօսքը, գործը եւ առաքելութիւնը յաճախ շուքի մէջ կը մնան մեր կեանքէն ներս հակառակ անոր որ անոնք մեր հասարակական, ընկերային եւ մշակութային կեանքի շարժակները կը հանդիսանան: Ժանեթ Գիրեջեան կու գայ ամէնուս յիշեցնելու թէ որքան կարեւոր, որքան հարազատ, որքան էական է որ հայ կնոջ խօսքը լսուի մեր առօրեայ հասարակական եւ մտաւորական կեանքէն ներս: Ապրի'ան այդ խօսքը որակական գիտակցութեամբ ամէնուս փոխանցելու իր ջանքին եւ նուիրումին համար:

Տիկին Ժանեթ Գիրեջեան
Ծնած է Հայկապ:

Նախնական եւ միջնակարգ ուսումը ստացած է տեղւոյն Հայ կաթողիկէ Անարատ Յղութեան քոյրերու վարժարանէն ներս ապա շրջանաւարտ եղած է Քառէն Եփփի ձեմարանէն՝ 1955 թուականին:

Իր ծննդավայրին եւ ապա Լիբանանի մէջ գրադարձ է ուսուցչութեամբ, միաժամանակ հետեւելով մանկավարժական դասընթացներու Պէյրութի Ecole Des Lettres հաստատութեան մէջ:

Վրեմանի քաղաքացիական պատերազմին պատճառով իր ամուսնոյն հետ թորոնթոհայան հաստատուած է 1976-ին: Իբրեւ ֆրանսերէն լեզուի ուսուցիչ պաշտօնավարած հայ եւ օտար զանազան կրթական հաստատութիւններէ ներս միաժամանակ շարունակելով իր մանկավարժական ուսումը՝ ձեռք բերելով Պատկաւոր Արուեստի (B.A.) տիտղոսը:

Իր բանաստեղծութիւններու առաջին հատորը ԾԱՂԿԱՔԱՂ լոյս տեսած է թորոնթո 2013 թուականին:

Կեդրոնական Բարձրագոյն Վարժարանը

Շարունակուած էջ 8-էն

մաճաչն այս տարի եւս պարզեւատրուեցան տարբեր մարգերու մէջ դպրոցին նեցուկ կանգնող շրջանաւարտներ եւ ուսուցիչներ: Այս տարի եւ առաջին անգամ ըլլալով ճաշկերոյթը ունեցած էր հովանաւոր: Պարոն Վահէ Անթիքաճեան հպարտութեամբ ներկայացուց օրուան հովանաւորութիւնը ստանձնող տէր եւ տիկին Գալուստ Փանտազոսը, որ 1971-էն ի վեր հաստատուած է Ամերիկա եւ տքնաջան աշխատանքէ ետք հասած է յաջողութեան: Ամուսնացած է Տալիլային հետ եւ ունի երկու զաւակ ու թոռնիկներ: Փանտազոս գոյգը հիմնադիրն է "Armenian Spiritual Cultural Foundation"-ին, որովհետեւ անոնք կը հաւատան որ աղօթքը մարդուն սիրտը կ'ազնուացնէ, հոգիի մխիթարութիւն եւ սրտի գոհունակութիւն կու տայ: Պէտք է ընդգծենք, որ "bone marrow" ծրագիրին ի նպաստ հանդանակային ձեռնարկներու համար իր դուռը միշտ բաց եղած է եւ մեծագումար նուիրատուութիւններ հաւաքելու աշխատանքներ իրականացուցած է: Ան հայ դպրոցը կը նկատէ հայապահպանման սրբավայր, որուն պէտք է գուրգուրանքով եւ երկիւղածութեամբ մօտենալ:

Շրջանաւարտից Միութիւնը բարձր գնահատելով Փանտազոս ամուսին մարդկային օժանդակութեան աշխատանքները, երախտագիտական խօսքեր բովանդակող յուշանուէր մը յանձնեց անոնց:

Ապա, բեմ բարձրացաւ Դոկտ. Յակոբ Տէր Կարապետեան, որպէսզի ներկայացնէ «տարուան շրջանաւարտ»՝ Տոքթ. Յակոբ Իշխանեանը: Սահիկներու ընկերակցութեամբ Դոկտ. Տէր Կարապետեան հակիրճ ձեռով պատմեց Տոքթ. Յակոբ Իշխանեանին կենսագրականը, նշելով որ ան հոգեւոր երգերու երգչախումբի անդամ եղած է, պասկէթպոլ խաղացած է, եղած է գործունեայ ջանիցական եւ Փեթանեայ վարժարանի հոգաբարձութեան ատենապետ: 1970-ին կ'աւարտէ Պէյրութի Ամերիկեան համալսարանի բժշկական մասնա-

գիտութիւնը, որմէ ետք կատարած է նաեւ վիրաբուժական վարժութիւններ: Ամերիկայի մէջ կ'ամբողջացնէ իր մասնագիտութիւնը եւ կը դառնայ ոսկրաբու-վիրաբույժ: Ան միջազգային ճանաչուած ունի իբրեւ փշրուած ոսկորներ վերականգնող վիրաբույժ: 1988 Գիւմրի-Սպիտակ աղիտալի երկրաշարժի պատճառով Ամերիկա ուղարկուած հայ վիրաւորները կը բուժէ կամաւորաբար: Եղած է հայ նշանաւոր ծանրաբարձ՝ Եուրիկ Վարդանեանին, ինչպէս նաեւ թեմիսի նշանաւոր խաղացող Բէթ Սամբէսի բժիշկը: Ան միշտ նիւթական օժանդակութեամբ նեցուկ կանգնած է ԿԲՎ-ի կարիքներուն:

Շրջանաւարտից Միութիւնը բարձր գնահատելով Տոքթ. Իշխանեանին մարդկային օժանդակութեան աշխատանքները, երախտագիտական եւ յարատեւ վերելք մաղթող խօսքերով յուշանուէր մը յանձնեց:

Երախտագիտական յուշանուէր յանձնուեցաւ նաեւ պրն. Արամ Պուլղուրճեանին, տարիներու իր տնօրէնի վաստակին համար, ինչպէս նաեւ իր տիկնոջ Անայիս Պուլղուրճեանին՝ իր կատարած բարոյական եւ նիւթական օժանդակութիւններուն համար:

Յատուկ շնորհակալութիւն յայտնուեցաւ պարոն Յարութ Համասեանին, որ տարիներէ ի վեր կամաւորաբար կը կատարէ Միութեան հաշուեքննութիւնը:

Ճաշկերոյթի գինիները տրամագրուած էին "Wines of Armenia.com"-ի կողմէ:

Աւարտին, ճաշկերոյթը իր երգերով խանդավառեց Սեպուհ Նաճարեան, որ հայերէն եւ օտարալեզու երգերով ներկայանալուն սիրտերը լիացուց եւ անոնց պարի հրաւիրեց:

Վարձքը կատար բոլորին: Անհամբեր կը սպասենք յառաջիկայ տարուան ԿԲՎ-ին նեցուկ կանգնող ճաշկերոյթին:

ԿԲՎ-ի Արեւմտեան Ամերիկայի Շրջանարտից Միութեան վարչութիւն

Մեր Զիւրերը



Շաբաթ, 13 Ապրիլ 2019 առաւօտեան ընդունեցինք հեռաւոր Ուրուկուէյէն Տիկ. Մարիա Քէմանեան Պալատեանին այցելութիւնը: Տիկ. Քէմանեան իր հետ բերած էր պատմական յուշանուէր մը, ուղարկուած Ուրուկուէյի Ս.Դ.Ն. Կուսակցութեան պատասխանատուներէն ընկ. Տանթէ Ասիլեանի կողմէ: Յարգելի Տիկ. Մ. Պալատեան ծանօթացաւ Փաստինայի ակումբի ու «Մասիս» շաբաթաթերթի աշխատանքներուն եւ շահեկան տեղեկութիւններ փոխանցեց Ուրուկուէյ գաղութի մասին:

Մարդիկ Չեն Փոխուիր, Անոնք Պարզապես կը Զանցն Դիմակները

Իւրաքանչիւրը ունի իր կեանքն ու ընտրութիւնը: Այդ ընտրութիւնը կատարելով ձեր առջեւ օրինակներ մի դնէք: Եթէ կաս կածներ ունիք, մի ընէք, եթէ կը հասկնաք, որ ձերը չէ, հեռացէք: Իւրաքանչիւրը իրաւունք ունի իր ուղին ունենալու եւ ատոր ճա նապարհին իր սխալները կատարելու: Այդպէս ալ կը կառուցուի մեր անկրկնելի կեանքը: Եւ այսպէս, մէկընդմիջա յիշեցէք՝

1) Զեզի երբեք չեն ըսեր, որ ամուսնութիւնը չի փրկեր խնդիրներէն, ունայնութենէն կամ միայնութենէն: Ուրիշ մարդ չի կոծկեր ու չի փոխափոխուցեր ձեր սեփական թերութիւնները, ընդհակառակը, այդ մարդը կրնայ մերկացնել այդ թերութիւնները, որմէ ետք միայն դուք պէտք է գլուխ հանէք:

2) Զեզի անկեղծօրէն չեն ըսեր, որ աւելի ազնիւ ու ճիշդ պի տի ըլլայ միտակ մնալ, քան յաջորդ տարբերակը չունենալու վախէն կախուիլ որեւէ տարբերակէ:

3) Երեխաները միայն երջանկութիւն չեն: Երեխաներ ունենալ կը նշանակէ անքնութիւն, սեփական ժամանակի, իսկ երբեմն ալ անձնական կեանքի կատարեալ բացակայութիւն: Եթէ դուք ատիկա կը գիտակցիք, հիանալի է, սակայն եթէ դուք պատրանքներ ունիք, որ երեխայի ծնունդով ձեր կեանքը միայն հաճոյքներու փունջ պիտի ըլլայ, մտածեցէք, արժէ՞ արդեօք երեխայ ունենալ ընդհանրապէս:

4) Յարաբերութիւնները փոխադարձ պատասխանատուութիւն կ'ենթադրեն, եւ եթէ իւրաքանչիւրը պատասխանատու ըլլայ ինքն իր համար, այլ ոչ՝ գուզընկերոջ, ուստի բոլորին համար աւելի լաւ ու յարմարաւէտ պիտի ըլլայ:

5) Այն ընտանիքներուն մէջ, զորս դուք կատարեալ կը համարէք, կան իրենց խնդիրներն ու իրենց մութ ընդգտակը: Կատարեալ ընտանիքներ չկան:

6) Սէրը միշտ նոյն ուժը չ'ունենար: Եթէ դուք չէք սորված խօսիլ, յարգել ու հոգ տանիլ իրարու, ուստի ձեզի համար իմաստ չունէր յարաբերութիւններու մէջ մտնելը: Ուրեմն դուք դեռ այդ քան չէք հասունցած:

7) Զոյգերուն մեծ մասը գիրար կը խաբէ սեռային յարաբերութեան վերաբերող հարցերու մէջ: Սորվեցէք անկեղծօրէն իրարու հետ խօսիլ ձեր ցանկութիւններուն մասին, սորվեցէք խօսիլ ընդհանրապէս ամէն ինչի մասին:

8) Եթէ ամենասկիզբէն դուք ձեր գուզընկերոջ հետ որեւէ ընդ

հանուր բան չունիք, ուստի դժուար թէ ատիկա երբեւէ յայտնուի: Այդ պատճառով ալ, որոշ ժամանակ անց, չ'արժեր բողոքել, քանի որ ի սկզբանէ տեսած էք, թէ ով կ'ընտրէք:

9) Սորվեցէք ընդունիլ ձեր սխալները: Եթէ գիտակցած էք, որ սխալած էք ընտրութիւն կատարելու մէջ ու ձեր կողքին ձեր մարդը չէ, միանգամայն հեռացէք: Մի խաբէք ե՛ւ ձեզ, ե՛ւ ուրիշները:

10) Մարդիկ չեն փոխուիր: Անոնք պարզապէս աւելի շատ կը բացուին ու կը հանեն դիմակները: Դուք ձեր սիրով ունէ մէկը երբեք չէք փոխեր: Եթէ մարդը ինք որոշէ, որ դուք արժէք էք, որուն համար կարելի է փոխել սեփական կեանքը, ատիկա անոր ընտրութիւնն է: 11) Ոչ մէկ տեսական փորձ կը փրկէ իրական խնդիրներէն: Այն, որ դուք դադարած էք գանոնք տեսնելէ, դեռ չի նշանակեր, որ անոնք անհետացած են: Ատոր համար ալ ճիշդ կերպով իրա կան աշխարհի խնդիրները լուծեցէք այդ իրականութեան մէջ ու յստակ գործողութիւններով:

12) Մի ապրիք այլոց խորհուրդներով ու մի ձգէք, որ ձեր ներաշխարհօք ու ձեր ընտանիքի աշխարհ մտնեն ոչ-մասնագէտ մարդիկ: Խոհանոցային հոգեբանութիւնը հաւանաբար լարուածութիւնը մեղմացնելու լաւ եղանակ է, սակայն շատ վատ է՝ իբրեւ գործօն խորհուրդներու համակարգ դիտարկելով: Սովորաբար ամէն ինչ կ'աւարտի ուղեղային զգվտոցով եւ մտքերու սովորական, բաց ոչինչ տուող փոխանակութեամբ:

13) Տղամարդոց հետ դիւրին է: Անոնց պէտք է աջակցիլ, լսել, կերակրել, տալ եւ անոնցմէ չխլել տան մէջ ունեցած իրենց տեղը: Կանանց հետ նոյնպէս դիւրին է: Անոնց հետ պէտք է խօսիլ ու տալ պաշտպանութեան ծախսեր ու սիրոյ զգացողութիւն: Բոլորին հետ դիւրին է, եթէ անկեղծ ըլլան ու չուզեն որեւէ եղանակով կոտրել գուզընկերը:

14) Ընտանիք ստեղծելուն ու երեխաներու ծնունդին պէտք է մօտենալ այն ժամանակ, երբ գիտէք, թէ ինչու անոնք պէտք են ձեզի: Ուրիշ կարծիքներն ու հասարակութեան կարգաւորումները այստեղ չեն աշխատիր:

15) Եթէ դուք սխալած էք, ներեցէք դուք ձեզ ու անցէք առաջ: Կեանքը չ'ափազանց հետաքրքրական ու հիասքանչ է, որպէսզի սեփական ձեռքերով զայն դժուարի վերածէք:

Մեր Պատուախնդիր Չեմպիոնը

Շարունակուած էջ 14-էմ

Այնուհետ օրուայ սպորտային լուրերի վերնագիրը տարբեր, մանաւանդ ռուսալեզու եւ հայալեզու լրատուամիջոցներում գետեղուած էր նոյն բովանդակութեամբ: 1972 թ. Յուլիսին... «Քուպայում անցկացուող աշխարհի

ծանրամարտում, 57-60 կգ. կարգում նոր ռեկորդներ սահմանելով հրում վարժութիւնում 140կգ եւ պոկում վարժութիւնում 110 կգ աշխարհի ախոյեան է ճանաչուել, Խորհրդային Միութիւնը ներկայացնող հայ ազգի մարզիկ Հրանտ Թորոսեանը:

Պանդուխտ

Հասարակ Գնարտութիւններ 3արաբերութիւններու Մասին, Որոնք Պետք է Յիշել

1) Զեր կեանքի ճանապարհին դուք ոչ մէկուն պատահական կը հանդիպիք- Մենք ամէն օր կը հանդիպինք նոր մարդոց եւ իւրաքանչիւր հանդիպումէ մեզի համար որեւէ կարեւոր բան կը քաղենք: Մէկը մեզ փորձութեան կ'ենթարկէ, ուրիշ մէկին դաս կը քաղենք, մէկին նոր բաներ կը սորվինք, իսկ մէկը մեզի աւելի լաւ կը դարձնէ եւ ատիկա ամենարժէքաւորն է:

2) Յարաբերութիւններու մէջ դուք կը ստանաք այն, ինչ՝ կուտաք- Յոյս մի ունենաք, որ ձեր կամակորութիւններուն, մեղադրանքներուն եւ վիրաւորանքներուն ի պատասխան պիտի ստանաք ժպիտներ, գրկախառնութիւններ եւ սիրոյ խոստովանութիւններ: Եթէ կ'ուզէք ըմբռնուի, ուստի դուք ալ պէտք է ըմբռնուի մօտենաք: Ամէն ինչ կը վերադառնայ՝ ատիկա հասարակ բանաձեւ է, որ միշտ կ'աշխատի:

3) Պէտք չէ պայքարիլ մարդու կեանքին մէջ տեղ գրաւելու համար- Ստիպելով սիրուած չես ըլլար: Շատեր կը մոռնան այս հասարակ եւ շատ իմաստուն ճշմարտութիւնը:

4) Բոլոր մարդիկ կը փոխուին եւ ատիկա բնական է- Պահանջ-մունքները, մտքերը եւ նոյնիսկ համոզմունքները կը փոխուին: Այդ պատճառով, եթէ ունէ մէկը կ'ըսէ, որ դուք փոխուած էք, մի տխրիք եւ մի փնտռէք թերութիւնները ձեր մէջ: Հաւանաբար, հակառակը, այդ փոփոխութիւնները ձեր օգտին են: Ոչ մէկ սարսափելի բան կայ, եթէ ձեր եւ ձեր մտքերիմ ընկերոջ հետաքրքրութիւնները սկսած են տարբերիլ, իսկ չփունջ հետզհետէ կը մարի: Աւելի լաւ է իրար մէկ-մէկ շնորհաւորանքներ ուղարկել եւ պահպանել ջերմ յարաբերութիւնները, քան փորձել յարաբերութիւններէն քամել այն, ինչ արդէն չկայ եւ կուտակել վրդովմունքը: Եղէք անկեղծ:

5) Յարաբերութիւններուն վրայ պէտք է աշխատիլ- Յարաբերութիւնները իրենք իրենց չեն կառուցուիր: Անկեղծութիւնը, փոխա-

դարձութիւնը եւ յարգանքը այն հիմքն է, առանց որուն յարաբերութիւնները կը փլուզուին:

6) Պէտք է կարենալ ներել- Շատեր կը կարծեն, թէ ներելը թուլութեան նշան է: Սակայն «ես քեզ կը ներեմ» բառերը ամենեւին չեն նշանակեր, որ «ես չափազանց փափուկ մարդ եմ, այդ պատճառով չեմ կրնար նեղանալ, իսկ դուն կրնաս շարունակել փճացնել իմ կեանքս եւ ես քեզ ոչինչ կ'ըսեմ», այլ կը նշանակէ «ես թոյլ չեմ տար անցեալին փճացնել ապագան եւ ներկան, այդ պատճառով ես քեզ կը ներեմ»:

7) Վէճերը ժամանակի անիմաստ կորուստ են- Որքան քիչ ժամանակ ծախսէք վիճելով այն մարդոց հետ, որոնք ձեզ կը վրդովեցնեն, այնքան քիչ ժամանակ կ'ունենաք շփուելու այն մարդոց հետ, որոնց կը սիրէք: Եթէ վէճը ձեր եւ ձեր սիրելի մարդու միջեւ է՝ տիրապետեցէք ձեզ: Մի ձգէք, որ բարկութիւնը պարուրէ ձեզ, այլապէս կրնաք այնպիսի բաներ ըսել, որուն համար կրնաք գղջալ: Երբեմն նոյնիսկ մէկ անգոյշ բառը կրնայ քանդել ամուր յարաբերութիւնները:

8) Դուք չէք կրնար փոխել ուրիշը- Դուք պէտք է սորվիք ընդունիլ ձեր մտքերիմ մարդոց այնպէս, ինչպէս կան: Եթէ ունէ մէկը ձեզի համար հաճելի չէ՝ ազնիւ եղէք եւ ըսէք իրեն: Հաւանաբար ան, որ ձեզ կը սիրէ՝ փոխուի ձեզի համար:

9) Որոշ մարդոց բացակայութիւնը ձեր կեանքին մէջ կրնայ ձեր օգտին ըլլալ- Մի վախնաք փոխելու շրջապատը: Պէտք է կարենալ ձգել անոնց, որոնք ձեր կեանքին անյարմարութիւն կը բերեն:

10) Գնահատեցէք ձեր կողքը գտնուող մարդիկը- Անոնց ժամանակ յատկացուցէք: Հնարաւոր է, որ ձեր յարաբերութիւնները աւարտին, սակայն եթէ նոյնիսկ որեւէ բան յարատեւ չէ, չի նշանակեր, որ չ'արժեր ատոր վրայ ժամանակ ծախսել:

«Ոչ» Ըսելով Արդեօք Դուք Ձեզ Սեղաւոր կը Զգա՞ք

Հոգեբանները անդրադարձած են «ոչ» ըսելու դժուար խնդիրին ու խորհուրդներու միջոցով փորձած են օգնել, որ առանց մեղաւոր զգալու կարելի ըլլայ «ոչ» ըսել: «Ոչ» ըսել յատկապէս դժուար է անոնց, որոնք վստահ չեն իրենց նկատմամբ: Բայց, եթէ տիրապետէք «ոչ» ըսելու նուրբ արուեստին՝ կրնաք հասնիլ լուրջ արդիւնքներու:

Առաջինը, որ պէտք է խոստովանիք, այն է, որ ամէն անգամ ունէ մէկուն չուզելով «այո» ըսելով, դուք կը յայտնուիք վատ վիճակի մէջ: Եւ ատիկա զարմանալի չէ: Դեմ երթալ դուք ձեզ, կը նշանակէ՝ ներքին հակասութիւն ունենալ: «Ոչ» ըսել սորվելու համար անհրաժեշտ է համբերութիւն եւ փորձ: Նախ փորձեցէք ըլլալ այնպէս, ինչպէս կաք: Թող միւսները գիտնան ձեր նախընտրութիւնները, ճաշակն ու արժէքները: Հնարաւոր է՝ ձեզի աւելի լաւ ճանչնալով՝ ձեր մտքերիմները չխնդրէին ձեզմէ այն, ինչը ձեզի համար հաճելի չէ: Զեր մտքերիմները կ'ուզեն ձեզ երջանիկ տեսնել եւ ձեր կեանքը բարդացնե-

լու մտադրութիւն չունին: Եթէ մենք չենք արտայայտեր մեր պահանջները, չենք կիսուիր մեր մտքերով մտքերիմներու հետ, անոնց կը գրկենք մեզ հասկը նալու եւ ճանչնալու հնարաւորութիւններէն: Մտածեցէք արտայայտու թիւններ, որոնք պիտի օգնեն ձեզի մերժելու ուրիշները: Օրինակ՝ «հիմա չեմ կրնար ատիկա ընել», «ժամանակ չունիմ», «այդ օրը ուրիշ գործեր ունիմ», «չեմ կարծեր, թէ այս անգամ կրնամ օգնել քեզի»: Փորձեցէք օգտագործել այս արտայայտութիւնները: Եթէ յանկարծ մոռնաք, պարզապէս ըսէք՝ «ոչ»: Ազնիւ եղէք: «Ոչ» ըսել բանի մը, որ չէք ուզեր ընել, աւելի լաւ է, քան ըլլալ անազնիւ: Մի խաբէք ձեզ եւ ուրիշները: Եթէ դուք չէք գիտեր՝ համաձայնի՞լ, թէ՞ մերժել, ուստի ժամանակ խնդրեցէք որոշում կայացնելու համար: Իսկապէս դիւրին բան չէ «ոչ» ըսելը, բայց յիշեցէք, որ ամէն անգամ «ոչ» ըսելով՝ դուք «այո» կ'ըսէք դուք ձեզի: Եւ յիշեցէք ամենակարեւորը. դուք պարտաւոր չէք ունէ մէկուն բացատրելու, որ ինչու այդպէս կը վարուիք:



**Զօրացիւք
Օժանդակենք
Փրկենք**

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org



Սիմոն Մարտիրոսեանը՝ Եւրոպայի Կրկնակի Ախոյեան



Օլիմպիական փոխախոյեան, աշխարհի ախոյեան Սիմոն Մարտիրոսեանը նուաճեց ախոյեանի կոչումը Բաթումիում ընթացող ծանրամարտի Եւրոպայի առաջնութեան 109 կգ քաշային կարգում: 22-ամեայ հայ ծանրորդը երկամարտում հաւաքեց 427 կգ:

Պոկում վարժութիւնում Սիմոն Մարտիրոսեանը 192 կգ արդիւնքով նուաճեց փոքր ոսկէ մետալ: Երրորդ փորի ժամանակ նա պատուիրեց 197 կգ՝ Եւրոպայի ռեկորդ, սակայն չկարողացաւ բարձրացնել:

Հրում վարժութիւնում Սիմոն Մարտիրոսեանն առաջին փորձի ժամանակ բարձրացրեց 225 կգ, ինչը բաւարար էր չեմպիոնի կոչումն ապահովելու համար, բայց նա բարձրացրեց նաեւ 235 կգ-ն:

Բռնցքամարտի Աշխարհի Գաւաթ. Անուշ Գրիգորեանը Ոսկէ Մետալ Է Նուաճել



Գերմանիայում տեղի ունեցած բռնցքամարտի աշխարհի գաւաթի խաղարկութիւնում 51 կգ քաշային Անուշ Գրիգորեանը մրցաշարի եզրափակչում յաղթել է Իռլանդիայի ներկայացուցչին ու նուաճել է ոսկէ մետալ:

Նշենք, որ աւելի վաղ Անուշ Գրիգորեանը դարձել էր Եւրոպայի 18-22 տարեկանների առաջնութեան ախոյեան:

Մարմնամարզութեան ԵԱ. Վահագն Դաւթեանը Դարձաւ Պրոնգէ Մետալակի

Լեհաստանի Շեցին քաղաքում աւարտին է մօտենում մարմնամարզութեան Եւրոպայի առաջնութիւնը:

Հայաստանի ներկայացուցիչ Վահագն Դաւթեանն օղակներ վարժութիւնում ելուցիչ ունեցաւ վերջինը եւ գրանցեց 14,933 արդիւնքը՝ նուաճելով պրոնգէ մետալը:

Նշենք, որ մեր միւս մարզիկը՝ Արթուր Թովմասեանը, 14,700 միւստրով 7-րդ տեղը զբաղեցրեց:



Արսէն Զուլֆալակեանը Նուաճեց Եւրոպայի Պրոնգէ Մետալ

Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբիշ Արսէն Զուլֆալակեանը պրոնգէ մետալ նուաճեց Բուխարեստում ընթացող ըմբշամարտի Եւրոպայի առաջնութիւնում:

77 կգ քաշային կարգի մրցումներում պատգամաւոր-մարզիկը 3-րդ տեղի համար մրցամարտում 5:1 հաշուով վստահ յաղթանակ տարաւ բուլղարացի Դանիէլ Ալեքսանդրովի նկատմամբ:

Այդպիսով, Արսէն Զուլֆալակեանն առաջին մեդալը բերեց Հայաստանի յունահռոմեական ոճի հաւաքականին:

«Լիվերպուլ»-ը Սեփական Յարկի Տակ Յաղթեց «Չելսի»-ին

Պրեմիեր լիգայի 34-րդ տուրում «Լիվերպուլ»-ը սեփական յարկի տակ 2:0 հաշուով յաղթեց «Չելսի»-ին:

Հանդիպման հաշիւը երկրորդ խաղակէսի սկզբնամասում՝ 51-րդ րոպէին բացեց Մանեն: 2 րոպէ անց անհասանազան կողմի հեղինակ դարձաւ Սալահը՝ մերսիսայդցիների առաւելութիւնը աւելի համոզիչ դարձնելով: Ինչպէս յետոյ պարզուեց, խաղում այլեւս կոլեր չգրանցեցին:

Այս խաղից յետոյ «Լիվերպուլ»-ը, վաստակելով 85 միւստր, 1 միւստրով կրկին շրջանցեց «Մանչեսթեր Սիթի»-ին ու գլխաւորեց մրցաշարային աղիւսակը: Սակայն «քաղաքայիններ»-ը մէկ հանդիպում պակաս են անցկացրել:

«Արսենալը» Բարձրացաւ Չորրորդ Տեղ

Անգլիայի առաջնութեան 34-րդ տուրում Լոնդոնի «Արսենալը» հիւրընկալուեց «Ուոլթֆորդին»: Իսպանացի Ունաի Էմերիի գլխաւորած թիմն առաւելութեան հասաւ նուազագոյն հաշուով, թէեւ արդէն 11-րդ րոպէին «Ուոլթֆորդի» կազմում հեռացուեց անգլիացի յարձակուող Տրոյ Դինին, որը գնդակով ընթացքի ժամանակ արմունկով հարուածեց մրցակցի դեմքին: Դրանից մէկ րոպէ առաջ հաշիւը բացել էր գաբոնցի յարձակուող Պլեյ-Էմերիկ Օբամեանգը:

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանն «Արսենալի» մեկնարկային կազմում էր եւ անցկացրեց ամբողջ խաղը:

«Արսենալը» 33 խաղից հետո 66 միւստրով բարձրացաւ չորրորդ տեղ: Նոյնքան միւստր ունի 34 խաղ անցկացրած «Չելսին»: Երրորդ տեղում ընթացող «Տոտենհեմը» 33 խաղում վաստակել է 67 միւստր:

«Արսենալը» Յաղթեց «Նապոլիին», Մխիթարեանը Մասնակցեց Խաղին

Ֆուտպոլի Եւրոպայի լիգայի քառորդ եզրափակիչ փուլի առաջին խաղում անգլիական «Արսենալը» յաղթեց իտալական «Նապոլիին»:

Լոնտոնի «Էմիրեյթս» մարզադաշտում կայացած հանդիպման հաշիւը 15-րդ րոպէին բացեց արսենալցիների ուեյսցի յարձակուող Արոն Ռեմզին: 25-րդ րոպէին իտալացիների սենեգալցի պաշտպան Կուլիբալին փորձելով փակել մրցակցի հարուածի դէմը, ակամայից գնդակն ուղարկեց սեփական դարպասը: Հենց այդ երկու կոլերն էլ ի վերջոյ վճռեցին խաղի ելքը՝ 2:0:

Հայաստանի հաւաքականի աւագ Հենրիխ Մխիթարեանը, որը հանդիպման առաջ յայտաւորուել էր «Արսենալի» պահեստայինների թւում, խաղի 67-րդ րոպէին փոխարինեց Մեսութ Օզիլին: Ինչպէս յայտնում են վիճակագիրները, նա կատարել է 10 փոխանցում, 6 մենամարտերից միայն մէկում է յաղթել, մրցակցի դարպասին ոչ մի հարուած չի հասցրել:

ՈւեֆԱ-ն Զենրիխ Մխիթարեանին Կ'աջակցի Ադրբեջանի Վիզա Ստանալու Զարցում

ՈւեֆԱ-ն Լոնդոնի «Արսենալի» եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանին աջակցութիւն կը ցուցաբերի Ադրբեջանի մուսքի վիզա ստանալու հարցում, եթէ անգլիական ակումբը նուաճի Եւրոպայի լիգայի եզրափակիչի ուղեգիր, հաղորդում է ESPN-ը:

Եւրոպայի լիգայի եզրափակիչը տեղի կ'ունենան Մայիսի 28-ին Ադրբեջանի մայրաքաղաք Բաքուում: Քառորդ եզրափակիչում «Արսենալի» մրցակիցն է իտալական «Նապոլին», որին Ունաի Էմերիի գլխաւորած թիմն առաջին խաղում յաղթել է 2:0 հաշուով:

Յիշեցնենք, որ Եւրոպայի լիգայի այս մրցաշարում Հենրիխ Մխիթարեանն «Արսենալի» հետ չէր մեկնել Բաքու, որտեղ անգլիական ակումբը 3:0 հաշուով յաղթեց ադրբեջանական «Ղարաբաղին»: 2015-ին էլ հայ կիսապաշտպանը Դորտմունդի «Բորուսիայի» հետ չէր մեկնել ադրբեջանական «Գաբալայի» դեմ Եւրոպայի լիգայի խմբային փուլի արտագնայ հանդիպմանը:

ՊՍԺ-ի Երկրորդ Պարտութիւնը՝ 1:5

Ֆրանսայի առաջնութեան 32-րդ տուրում չեմպիոն ՊՍԺ-ն մրցակցի խաղադաշտում հանդիպեց փոխ-ախոյեանի կոչմանը յաւակնող «Լիլին» եւ պարտութիւն կրեց 1:5 հաշուով:

36-րդ րոպէից փարիզեանը թիմը հանդէս էր գալիս 10 ֆուտպոլիստներով: Վերջին յոյսի խախտման համար կարմիր քարտ ստացաւ սպանացի պաշտպան Խուան Բերնատը, որը 11-րդ րոպէին կոլ էր խփել՝ հաւասարեցնելով հաշիւը: «Լիլը» կարողացաւ արդիւնաւէտ օգտուել թուային առաւելութիւնից եւ եւս չորս կոլ խփել:

ՊՍԺ-ն 31 խաղից յետոյ 81 միւստրով առաջինն է, «Լիլն» ունի 64 միւստր եւ երկրորդն է՝ 8 միւստրի առաւելութեամբ երրորդ տեղում ընթացող «Լիոնի» նկատմամբ: Այս խաղում չպարտուելու դէպքում, ՊՍԺ-ն առաջնութեան աւարտից 7 խաղ առաջ կ'ապահովուէր ախոյեան-նութիւնը:

Այս առաջնութիւնում ՊՍԺ-ն կրեց երկրորդ պարտութիւնը: Առաջինը՝ 1:2 հաշուով պարտութիւնն էր «Լիոնից»: Ֆրանսիայի առաջնութիւնում նախորդ անգամ չորս կոլի տարբերութեամբ ՊՍԺ-ն պարտուել էր 2000թ. Դեկտեմբերի «Սեդանին»՝ դարձեալ 1:5:

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

ՆՈՒՊԱՐ ԹԱԻՈՒՔԺՆԱՆԻ մասնական տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միությունը իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի այրիին Տիկ. Անի Թաւուքճեանի, իր դստեր Շողիկին եւ համայն պարագաներուն, մասնաւորաբար՝ Թաւուքճեան, Մոլոյեան եւ Վարդանեան ընտանիքներուն:

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

ՆՈՒՊԱՐ ԹԱԻՈՒՔԺՆԱՆԻ մասնական տխուր առիթով Տէր եւ Տիկ. Յարութիւն եւ Շուշան Վարդանեան իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար իր կնոջ Անի Թաւուքճեանին եւ դուստրին Շողիկին:

Առ այդ \$200 տոլար կը նուիրեն «Մասիս»ի ֆոնտին:

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

Վերջերս Երեւանի մէջ մահացած է Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան հաւատաւոր ու գործունեայ անդամներէն ընկեր ԱՐՏՕ ԱՌԱՔԵԼԵԱՆը:

Այս առթիւ Տէր եւ Տիկ. Գէորգ Թաւուքճեան եւ Տէր եւ Տիկ. Մինաս Տէր Մինասեան իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն:

Առ այդ փոխան ծաղկեպսակի «Մասիս» շաբաթաթերթին կը նուիրեն \$200 տոլար:

Խարդախների Միութիւնն ու Մենք

Շարունակուած էջ 14-էն

ձիւղ է, փոքր է տեղը, հագիւ 1015 աթոռ է տեղաւորուած... դէ, դուք էլ պիտի որ հասկանաք, մենք նոր ենք ստեղծել «Խարդախների Միութիւն»ը, դեռ նիւթական միջոցներ չունենք կարգին սրահ վարձելու համար: Եկէ՛ք, եկէ՛ք գնանք ներս, դուք կը ծանօթանաք Միութեան միւս անդամների հետ եւս: Ես՝ Միութեան փոխնախագահն եմ:

Չէ՛, չէ՛ ախպեր, էս մեր տեղը չի Զիմզիմով ջան, ասաց Չամբախովը եւ որպէսզի ոչ ոք չչլսի, նրա ականջին փսփսաց. Հողեր մեր գլխին, թէ՛ որ էս ջլղիկն է (փողոցային կին) միութեան փոխնախագահը, ի՞նչ պտի սովորինք խոնցմէ... յետոյ՝ բարձրաձայն՝ Ել, ել էրթանք...

Չէ՛, չէ՛ տղերք ջան, էսպէս չի էղնի, ամօթ բան կենէք, ասաց երկար ժամանակ լուծիւն պահած վարորդ Լենդրուշը, քիչըմ նստինք՝ յետոյ կ'եղնինք: Ձեզ պտի տանիմ օդորմածիկ Լեովիկի ռեստորանը: Ընտեղ լաւ ասետրինա կուտան:

Համաձայնութիւնը կնքուեց: Մեր հերոսները մի կերպ տեղաւորուեցին շէնքի մուտքի նեղլիկ միջանցքում եւ սկսեցին ուշիուշով հետեւել անցուղարձին:

Էն ո՞վ է, որ դիփունանց մէջ տարբեր ի, փոչոտ, դոշերը բաց, փնթի, մաշած ջինսով կարճլիկ մարդը, հարցրեց Զիմզիմովը Լենդրուշին:

Շատ ճիւղ էլ ըսիր վարպետ, իդոր անունը ֆնթի Գրոշ է, միութեան նախագահն է: ֆնթին՝ փնթի է, Գրոշն էլ կպրեր էն, որովհետեւ կոպեկի, գրոշի մեռած մարդ է: Շատ քիպ է Դիանի հետ:

Իժո՞ւմ, վայ թէ... երկու ձեռքերի ցուցամասներն իրոր շփելով ինչոր բան ուզեց հասկացնել միլիոնատէրը:

Ներող կ'եղնիս ուստայ, հասկանալով թէ ինչ նկատի ունի դիմացինը՝ շարունակեց, էդ մէզը չիդեմ, համա մենազ կնիկ է, առանձին կ'ապրի, ի՞նչ իմանաս, մինչեւ հաստատ չիմանաս, կ'ըսէ ժողովուրդը: Համա որ, Գրոշի խորհրդատուն է՝ էդիկ փաստ է: Դրան մարդիկ կը բերէն, սուսմուտ ընտրութիւններ կենէն եւ ձէներ կը հաւաքին եւ աթոռ կը գրաւին: Էն մէկէ՞ն ով է... քովի սեւ

կոստումովը, ուզում էր շարունակել Զիմզիմովը՝ նոյն վայրկեանին հնչեց հենց այդ նոյն «կոստումովի» բարձրագոյ յոխորտանքը.

Է՛, դուք... ով էք, ինչ էք՝ չգիտեմ, հերիք է խօսէք... եթէ ձեզ հետաքրքիր չէ մեր երեկոն՝ դուրս եկէ՛ք սրահից:

Ընչի՞ կը պոռաս Ստի Մուկուշ, ասաց Լենդրուշը, ամօթ չէ՞... իսոնք հիւրեր են, վայ թէ լսած էլ կ'եղնիս Զիմզիմովի եւ Չամբախովի անունները, փոխարէն մօտենաս, բարեւըմ ըսես, բարի գալուստ ըսես, ելել յոխորտաս կը... ամօթ է, ամօթ, էսիկ քու օֆիսդ չէ, որ ուզածդ էսես:

Տեսնելով, որ հիւրերը տեղից չեն շարժուած, Ստի Մուկուշը՝ ինքը մօտեցաւ նրանց. Ինչ է, չլսեցի՞ք, որ ես ասացի դուրս գալ սրահից... դուք դեռ սաղ էք... ձեզ վաղուց ենք նետել պատմութեան աղբամանը: Ուզում էք, որ ոստիկան կանչեմ: Ես իրաւաբան եմ, կարող եմ նաեւ ձեզ դատի տալ մեր երեկոյի ընթացքը խանգարելու համար:

Չէ, չէ՛, պէտք չի Ստի Մուկուշ, ես հիմա վերգոյնի կը կանչեմ՝ նա սրանց դուրս կանի, հեռուից ձայն տուեց Դոն Պիպոն:

Բանը, իհարկէ ձեռնամարտի չհասաւ: Մերոնք գլխահակ, լուրեհայն դուրս եկան միջանցքից: Մայթին բոլորուած՝ երկար ժամանակ լուռ մտորում էին մեր հերոսները:

Էս ի՞նչ փոթորիկ էր Զիմզիմով, հլա մի փիքը արա... էս ո՞ւր ենք ընկէ, դիմեց ընկերոջը Չամբախովը, էդ Ստի Մուկուշը աչկիւրը չորս արած՝ հենահենա արլանդուա (վրացերէն՝ կուրացնել, շեն. Ա.) էր անելու աչկիրըս:

Համա, Լենդրուշ ախպեր, դուն դիփունանց գիտիս, էն ցիլինդրով մարդն ո՞վ էր, հարցրեց Զիմզիմովը:

Օ՛... էդիկ ամենէն մենձ խաբեբան ա, գող, աւագակ, դրա համար են անունը դէ՛ Դոն Պիպո: Վայ թէ գիտիք, որ Դոն Պիպոն իտալիայի ամենայայտնի մաֆիոզներից մէկն ա: Էս միութեան մէջ ամէնը իրան են մտիկ տալի: Փող ուտելու մեծ վարպետ ա: Ձեռումը բռնես՝ չես կարգի հաստատի: Ինքը լաւ գիտի խաբելու ու ստի արուեստը: Իրա ձեռով իրեք միութիւն ա փուլ էկէ:

ԱՊԱՔԻՆՈՒՄ

Հ.Մ.Մ.ի ֆուլթայլի խումբի բարերարներէն ընկերուհի Անժէլ Գազգեան վերջերս ենթարկուած է վիրաբուժական գործողութեան մը եւ այժմ կը բուրդէ կազդուրման շրջանը:

Այս առթիւ Հ.Մ.Մ.ի Վարչութիւնը իր անունը կրող ANGEL ֆուլթայլի խումբի պատասխանատուներն ու խաղացողները արագ եւ կատարեալ ապաքինում կը մաղթեն իրենց հովանաւորին: Առ այդ՝ \$100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

Ամա, դուզը որ ասիմ, խիլքըս բան չի կտրում Չամբախով, ասաց Զիմզիմովը, սրանք ի՞նչ խաբեբայ, սուտի վարպետ, չէ, չէ՛ մի... սրանք քուչի խուժաններ են ախպե՛ր: Իսկական խաբեբան էլ նամուս, թասիք կ'ունենայ ու հենց ընենց, փուչ տեղը չի խաբի ու սուտ խօսայ:

Իմ խելքն էլ բան չի կտրում ախպե՛ր, ի՞նչ պտի սովորինք խոնցմէ... Լենդրուշ ախպեր, տար, տար մեզ ըստեղէն, տար էդ քու ըսած Լեովիկի ռեստորանը՝ քիչըմ թարմանանք, ասաց Չամբախովը:

Լենդրուշն արդէն նախօրոք տեղեկացրել էր ռեստորանի պատասխանատուներին սպասուելիք հիւրերի մասին: Ձեռքի հեռախօսով կապուեց նրանց հետ ու սեղան պատուիրեց երեք հոգու համար:

Դժուար չէր հասկանալ, որ սեղանը պատրաստուած էր յատկապէս վրացահայ մեծահարուստների համար: Սեղանի վրայ էին Սացիվին, Ձոնջոլին, Խաչապուրին, Խինկալին, նշանաւոր Սուլուգունի պանիրը, եւ՛սեւ խաւիարն էլ հետը, այդ ամէնին աւելացրած՝ Օսետրինայի խորովածը: Խմիչքն էլ՝ Ստալինի՝ ամբողջ կեանքում օգտագործած Խվանչկարա գինին:

Այս ամէնը տեսնելով, խաբէութեան եւ ստի հայ արքաները անակնկալի եկած՝ միաձայն գոչեցին.

Վա՛հ, սո՛ւ, էս ի՞նչ սեղան էք սարքիւ..., բա էս Խվանչկարան

ո՞րդուց, աւելացրեց Զիմզիմովը, Ասետրինան էլ հետը...

Անուշ արէք պարոններ, ձեզ նման հիւրերի համար մեզ մօտ ամէն ինչ կը ճարուի, ասաց երիտասարդ մատուցողը:


Մինչեւ յաջորդ օրուայ առաւօտեան ժամերը տեւեց գինարբուքը, որին միացել էին նաեւ ռեստորանի աշխատողներն ու հրաւիրուած գոււնաչիները: Մեր հիւրերի կողմից առատօրէն վարձատրուեցին բոլոր ներկաները: Ռեստորանից օլորմոլոր դուրս գալիս, երկու հարիւրանոց թիմելով Լենդրուշի գրպանը, բառերն իրար խառնելով, Զիմզիմովն ասաց.

Լենդրուշ ախպե՛ր, շնորհակալ ինք ամէն ինչի համար, համա ընչի՞ դրանք մեզ շան տեղ չդրին...

Հէ՛չ մի նեղանայ մենձ ախպեր... իդոնք՝ ուսում առած խաբեբաներ են, իբր մտաւորականներ: Դարը փոխուած ա: Հիմա խաբելու եւ ստելու թագա միջոցներ կան: Դուք միամիտ էրեխէք էք դրանց մօտ: Վաղը ձեզ Հայաստան եմ ճամբու դնելու: Ընդեղ էլ տեսնիք կը, թէ ինչքան են խաբում ու սուտ խօսում:


Ընդուր ա ասած, որ խաբում ի՞նչ է, խաբում ինք, նստում ինք թէ վեր ենք կենում՝ խաբում ինք հա՛, խաբում ինք, համ խաբած ինք... Մարդ կարա՞ց մի օր ապրի առանց խաբելու...

VA Print Media
 Book Printing • Hard Covers • Year Books
 Restoration of Old Books & Bibles




- Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝
- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ առւնչուած գիրքեր

Եթէ ունիք եման գիրքեր եւ կը փափաքիք գանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել Հեռաձայնելով՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻն:



Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան

Vahe Atchabahian
 2004 E. Washington Blvd. • Pasadena, CA 91104
 Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
 vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com



Հանրակարգերը պիտի մեկնին
կեսօրուան ժամը 12-ին

ԿԼԵՆՏԻՅԷՆ
ՊՐՐԱԵՆՔԷՆ
Լա Քրետենթա / ԹահանկաՆ
ՓասատինաՆ
ՄոնթեպելլոՆ
ՀոլիվուտՆ
Նորթ ՀոլիվուտՆ
Նորթ ՀիլզՆ
ԷնսինոՆ
Քանոկա Փարք / Վան ՆայզՆ

Փոխադրամիջոցներ ապահովելու եւ
յաւելեալ տեղեկութիւններու համար
հեռաձայնեցէ՛ք (888) 924-1915 թիւին:

ԱՐՊԱՐՈՒԹԵԱՆ ՔԱՅԼԱՐՇԱԻ

ԱՊՐԻԼ 24 ՄԻԱՍՄԻՆ ՔԱՅԼԵՆՔ

ԹՐՔԱԿԱՆ ՀԻՊԱՏՈՍԱՐԱՆ | ԺԱՄԸ 1-ԻՆ

6300 WILSHIRE BLVD , LOS ANGELES, CA 90048

FOR MORE INFORMATION VISIT WWW.MARCH4JUSTICE.COM |  ARMENIAN GENOCIDE COMMITTEE



WWW.MARCH4JUSTICE.COM | 888 924 1915